Է. ՏԱՐԻ 1859 — ԹՈՒԱԿԱՆ ՀԱՄՈՒՆ 16 ԱՐԵԳ 4382 — Հ. Տ. 24 ՄԱՐՏ 1890 — Ն. Տ. 5 ԱՊՐԻԼ 1890 — ՀԻՋՐ. 15 ՇԱՊԱՆ 1307 — ՇԱԲԱԹ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՔ է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՎԵԼՔ ԹԵՐԹԱՆՈՑ ՕՐԱԳՐԻ
Հալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌وه‌لك غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆԵՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար տարեկան գումարք	160
» » կիսամեայ » »	84
» » եռամսեայ » »	40
Գաւառաց » տարեկան »	200
» » կիսամեայ » »	100
Օտար երկիրներէ տարեկան գումարք	56
» » կիսամեայ »	28

Դուրս գրկուած լրագրոց համար ծախքը Տնօրէնութեան վրայ է
Խմբագրութեան գրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 24 ՄԱՐՏ, 1890

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Ա.

ԵՒՐՈՊԻՈՅ ՄԷՋ

Պ. Ժիւլ Սիմոն, որ Պերլինի Դորժաւորական Դեսպանախորհրդոյն առթիւ այնքան փառաւորեցաւ՝ ո՛չ միայն իւր ազգայնոց այլ և Գերմանաց եւ Անգլիացւոց գովեստին արժանանալով, գործաւորաց միայն չի սահմանափակեր իւր մարդասէր հոգածութիւնը։ Մանաւանդ Պ-լոգոն-ին գործին մեծ զարկ մը կուտայ։ Այս գործը մեր ընթերցողաց բացատրել անօգուտ չէ, քանի որ մեր ազգին համար ալ դասեր կրնան քաղուիլ անտի։

Զբաւոր և խնարՀ դասերը մեծամասնութիւն են ամեն ընկերութեան մէջ։ Եւ ամեն ընկերութեան մէջ, չքաւոր դասերն ամենէն աւելի բազմաթիւն են համեմատապէս։ Ուրեմն, ամեն ընկերութիւն իւր մէջ կը բովանդակէ չքաւոր տղայոց ստուար բանակ մը, զոր եթէ իւր պաշտպանութեան ներքեւ չառնու, չուզղէ և չկրթէ, մեծ թուով ապագայ չարագործներ կը պատրաստէ, կամ գէթ այնպիսի անդամներ որք օգուտէ աւելի վնաս կրրնան պատճառել ընկերութեան։

Քաղաքակիրթ ընկերութիւնք կարգ մը բարեբար տնօրինութիւններ ի գործ դրած են չքաւոր դասուց տղայքն ընկերութեան օգտակար անդամներ պատրաստելու համար։ Նախ և առաջ, կրթութիւնը ձրի եւ պարտաւորիչ հռչակած են, որպէս զի չքաւոր և տգէտ ծնողներ ո՛չ միայն պարտաւորին այլ և կարենան իրենց տղայոց նախնական կրթութիւն մը տալ։ Այս դրութեամբ, ունեւոր դասք, համեմատապէս աւելի տուրք վճարելով, չքաւոր մանկանց կրթութեան ծախքը կը հոգայեն։ Հաստատուած են նաև որբանոցներ, որք բոլորովին կ'որդեգրեն որբերը, կը կրթեն և գործի կամ արհեստի կը դնեն։ Արհեստանոցներ կան յատկապէս որբ և անպաշտպան տղայոց համար։ Քաղաքապետութիւններ և բարեգործական ընկերութիւններ բացած են տղայոց յատուկ հաշարաններ, ուր ձրիապէս կամ 10 փարայէն մինչեւ 40 փարայի վճարմամբ, ցերեկեայ ճաշը կը տրուի աղքատիկ մանկանց։ Կրօնասէրք և բարոյասէրք, հռոմէական թէ բողոքական, Ֆրանսայի մէջ թէ այլուր, մանկական և պատանեկան ընկերութիւններ հիմնած են, որք անդամներ կը գրեն մանաւանդ չքաւոր դասուց տղաքներէն, զորս կը զուարճացնեն զանազան խաղերով ու ներկայացումներով, և կը կրթեն բարոյացուցիչ ընթերցանութեամբք ու հրատարակութեամբք։

Բայց տակաւին այս կառավարական, քաղաքային ու բարեգործական տնօրինութեանց մէջ պակաս մը կար, զոր Պ. Ժիւլ Սիմոն և իրեն համամիտ տեարք և տիկնայք ոմանք ժամանակէ մ'ի վեր կը ջանան լրացնել։

Ի՞նչ պէտք է ընել ո՛չ միայն աղքատ այլ և չա՛ր ծնողաց զաւակներուն համար։ Կան հայրեր ու մայրեր որք իրենց իրաւունքները կորուսած են բարոյապէս, և եթէ յայտ օրինաց ծնողք են ու կը մնան դեռ, իրապէս իրենց զաւակաց յոռեգոյն թշնամիքն են։ Ծնողներ որք իրենց անբարոյականութեան մէջ թաւալիլը բաւ չհամարելով, այն անժեղ տղայքն ևս յոռի շաւղի մը մէջ մտցնելու չեն խղճար։ Ծնողներ ալ կան որք այնչափ յառաջ չերթալով՝ չարաչար կը վարուին իրենց զաւակաց հետ, զորս կանուխէն փողոց կը նետեն օրուան հացը ճարելու, և երբ խեղճ տղայք՝ վաստակաբեր և ժամանակէն յառաջ կեանքէ ձանձրացած՝ տուն դառնան երեկոյին, գինովութեամբ բոլորովին գազանացած ծնողք մեռցնելու ատելիճան կը ծեծեն զանոնք, եթէ իրենց յուսացածին չափ բան չեն շահած։ Այս լքեալ և խոցտանգեալ անպաշտպան տղայք, թէեւ որբ չեն, բայց որբերէն հազարապատիկ աւելի դժբախտ են։ Գործարաններու մէջ կը փտին, կամ փողոցներու մէջ կը թափառին, բան մը ծախելով քանի մը սու վաստկելու համար։ Իրենց ընտանեկան և ընկերական հանգամանքներն այնպէս են որ չիտակ ի կորուստ կ'առաջնորդեն զիրենք։

Ֆրանսական օրէնսդրութեան մէջ փոփոխութիւն մը կը պատրաստուի, որուն համեմատ իրենց զաւակաց վրայ ծնողական իրաւունքը բարոյապէս կորուսած հարք և մարք օրինապէս և դրապէս ալ կորուսանեն նոյն իրաւունքն։ Ցայտնի բան է թէ այս խեղճ տղայք այնպիսի հրէշներ ապրեցնելու դատապարտուելու չեն։ Ցայտնի բան է թէ ծնողական իրաւունքն ընկերային չարիք մը լինելու կերպիւ գործադրուելու չէ։ Ընկերութիւնը կ'ընդունի որ պարկեշտ բայց անկեալ հայր մը կամ մայր մը իւր զաւակաց աշխատութեամբ ապրի։ Մինչեւ իսկ կան պարագայներ ուր զաւակներ կը ջանան հարկադրուիլ իրենց ծնողքը խնամելու։ Բայց կան պարագայներ ալ ուր ընկերութիւնը ծնողաց և զաւակաց մէջտեղ կը մտնէ բոլորովին տարբեր պաշտօնով մը, ծնողաց ըսելու համար թէ իրենք յայտ ընկերութեան կորուսած են իրենց ծնողական բնական իրաւունքն։ որովհետեւ չարաչար վարուած են իրենց զաւակաց հետ, որովհետեւ անոնց պատուոյն ազատ բերող ընթացից մէջ գտնուած են, և որովհետեւ իրենց ծնողական իրաւանց կիրառութիւնը կրնայ իրենց զաւակաց ևս բարոյական և ընկերական կորստեան պատճառ լինել։

Պ. Ժիւլ Սիմոն, կառավարութեան իրաւունքը կառավարութեան թողլով, թեմի մէջ ուշադրութիւն կը հրաւիրէ այս լքեալ դժբախտ տղայոց վրայ, որպէս զի մասնաւոր ընկերութիւններ հետամուտ լինին այս տղայքն իրենց վտանգէն վիճակէն փրկելու։ Եթէ անասելի վայրեր կը տարուին և անորակելի մոլութեանց կառաջնորդուին, աղատեն զանոնք։ Եթէ փողոցներու մէջ կը թափառին, ժողովեն, ամփոփեն զանոնք։ Եթէ գաղտնապէս կը չարչարուին, երեւան հանեն, իմաց տան կառավարութեան, որդեգրեն զանոնք, և շատ կանուխէն թշուառութեան բաժակը ցմրուրն քամած այս խղճալի մանուկներն ու պատանեկներն, որբանոցներու կամ արհեստանոցներու յանձնելով, հսկեն անոնց բարոյական կրթութեան վրայ, մինչեւ որ բարոյապէս և օրինապէս ապահովեալ պայմաններով պարկեշտ գործի մը մէջ մտնեն և անկախ ապրուստի տէր լինին։ Ի մի բան, ինչ որ ընկերութիւնն արդէն կ'ընէ օրինապէս որբերուն համար, բարեգործական ձեռնարկութիւնը նոյն բանն ընէ այս բարոյապէս որբացեալ մանկանց և պատանեկաց։

Պ. Ժիւլ Սիմոնի հրաւէրը լսելի եղաւ։ Մի քանի նորակազմ ընկերակցութիւնք, որք՝ գլխաւորապէս բարեգործ տիկնայց ոմանց ձեռներիցութեամբ՝ երկու տարիէ հետէ ստանձնած էին մանկանց պաշտպանութեան ազնիւ գործն, այս առթիւ կարեւոր նուիրատուութիւններ ստացան, և բոլոր Ֆրանսական լրագրք քաջալերական լեզուաւ խօսեցան, յորդորելով իրենց ընթերցողներն որ քիչ մը նպաստ չինայեն՝ թշուառութեան այս ամենէն աւելի արդահատելի զոհերուն բարոյական և ընկերական վիճակն եթէ ո՛չ հիմնովին բարւոքելու, գէթ ամոքելու և առաւել հանդուրժելի ընծայելու համար։

Այսպէս երակցութեանց քով ուրիշ մը կայ իբրեւ լրացուցիչ։ Պ. Լէոն Սէ, Պ. տը Փրէսանսէ, Պ. Էպգառ և ուրիշներ, բողոքական, հռոմէական կամ ազատամիտ մարդասէրներ, նոր սերնդեան մէջ բարոյացուցիչ գրականութիւն ծաւալելու համար ընկերակցութիւն մը կազմած են, (ինչպէս անցեալ տարի Աբէ-Եէի մէջ բացատրած ենք,) նպատակ ունենալով տիրող անբարոյական գրականութեան վտանգներէն զգուշացնել նոր սերունդն, և հրահանգիչ, հետաքրքրաշարժ և բարոյացուցիչ ընտիր պատմութիւններ, ուղեգրութիւններ և գիտական ու գրական շահեկան գրուածներ կարդացնել պատանեկութեան, որ անյագ սիրով կ'ինայ գրականութեան վրայ՝ իւր մտային մէկ մեծ պէտքը լրացնելու համար։ Անբարոյականութեան նիւթական վտանգներէն զերծուցանելէ յետոյ մանկութիւնն, այս ընկերակցութիւն միւսին պիտի օժանդակէ՝ վերակազմելով այն անկեալ և լքեալ տղայոց բարոյականը, անոնց կարդացնելով այնպիսի գրուածներ որք պիտի խրախուսեն զիրենք լաւագոյն մարդիկ լինելու, և լսիրշ խօսքերով լեցուած փոքրիկ ուղեղներուն մէջ ժիր և պարկեշտ քաղաքացւոյ մը վայելուչ մտածումները պիտի տպաւորեն։

Մանկութեան և պատանեկութեան պաշտպանութեան համար ի Ֆրանսա թէ՛ կառավարական և թէ ընկերական շրջանակաց մէջ ի գործ դրուած այս գովելի տնօրինութիւնք իրաւունք կուտան մեզ անդամ մ'եւս հաստատելու մեր անցեալ աւուր դիտողութիւնը թէ Ֆրանսա, զոր ոմանք՝ անբարոյական վէպերու ընթերցմամբ դատելով՝ անբարոյականութեան հայրենիքը կ'ուզեն նկատել, ընդհակառակն դեռ բազմաթիւ ունի իւր անհատական, ընկերական և ընտանեկան բարոյականութեան չէնքը կանգուն պահելու ծառայող հաստատութիւններ և հիմնարկութիւններ։ Բարոյական այս տեսակ երաշխաւորութեամբ սպառազինեալ ընկերութիւն մ, իրաւունք ունի չատ չվախնալու այնպիսի համարձակ գրականութենէ մը, որ այն երաշխաւորութիւններէն զուրկ գտնուող ընկերութեան մը մէջ կարող է ընդհակառակն անհուն չարիք պատճառել։

Եւ երբ ամեն տեսակէտներով հայ ընկերութենէն անհունապէս աւելի զօրաւոր կազմակերպութեամբ օժտեալ այնպիսի յառաջացեալ ընկերութիւն մը իւր անկեալ ու լքեալ տղայոց պաշտպանութեան համար բացառիկ միջոցներ ձեռք առնուլ մարդասիրութեան տարրական պարտաւորութիւն կը համարի, խնդիր է թէ մեր եւս առաւել անպաշտպան ընկերութեան մէջ ի՞նչ կ'ընենք մեր լքեալ և անկեալ տղայոց պաշտպանութեան համար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԴԷՊԷՐԷՆ Ի ԳԵՐՄԱՆԻԱ

Տեսէ Նէ-ին Վիեննայի թղթակիցը կ'իմանայ թէ Պիզմարք իշխանի հրաժարականն և Վիլհէլմ Բ. Կայսեր և իշխան-Նախարարապետին միջեւ տեղի ունեցած վէճեր դժնդակ տպաւորութիւն մ'ըրեր են գերման վեհապետաց ոմանց վրայ, և Վիլհէլմ Բ. Կայսեր հետ իրենց յարաբերութիւնները պաղեցուցեր են։ Պատէնի մեծդուքսը մանաւանդ զայրացած մեկներ է Պերլինէ, յայտարարելով թէ «մեր ժամանակէն Պերլին վերադառնալու դիտում չունիմ»։ Սաքսոնիոյ թագաւորն ևս շատ նեղացեր է։

—Զանազան արհեստներու պարապող գերման գործաւորք կը չարունակեն պահանջել աշխատութեան ժամերու կրճատում և թոշակաց բարձրացում։

—Պիզմարք իշխան, հրաժարականին ընդունուելէն քիչ ետքը, մտերիմներու հետ խօսակցելով, բերնէն փախուցեր է սա նշանակալից խօսք։ «Ֆրետերիկ Կայսրուհին ինձ դէմ երկրորդ է-ՐԷՆ շահեցաւ։ Ինքն էր որ լեցուց և իմ գլխաս ուղղեց Հինձփիթերան ատրճանակն»։ Ցայտնի է թէ Տրթ. Հինձփիթեր, արդի կայսեր նախկին դաստիարակը, ժամանակէ մ'ի վեր շատ կը յաճախէր ի կայսերական պալատ, եւ կայսեր գլխաւորապէս այս մարդուն խորհրդոց անսալը զայրացուցած էր զՊիզմարք։

—Դերման լրագրք սա մանրադէպն (ՆԷԽԽՐ) կը պատմեն, ցոյց տալու համար թէ հաւանական չէ որ Պիզմարք այսուհետեւ քաղաքական գործերու խառնուի և երիտասարդ Կայսեր քաղաքականութեան դէմ հակառակորդի դեր առնու։ 1865—66 տարւոյ ձմրան, Պիզմարք և Վիլհէլմ Ա. անհամաձայն էին։ Նախարարապետն իւր վեհապետը կը մղեր Շլեզվիկ-Հոլշթայնի խնդրոյն մէջ անպիսի ազդու քաղաքականութեան մը, որոյ հետեւանքը պիտի լինէր Աւստրիոյ դէմ պատերազմ, բայց Նաեւ կարիլի պիտի լիներ Գերմանիոյ միացումը Բրուսիոյ թագաւորին գերագահութեան ներքեւ։ Վիլհէլմ Ա. թագաւոր, միապետական համերաշխութեան զգացմամբ տոգորեալ, և հապսպուրկեանց դէմ շարժում մ'ընել չուզելով, իւր նախարարապետին յանդգնելն և յեղափոխական խորհրդոց անսալ չէր յօժարեր։ Պիզմարքի մէկ մտերիմը զարմանք յայտնեց որ նախարարապետն հրաժարական չի տար՝ Խորհրդարանին մէջ ընդդիմադիր կուսակցութեան պետ լինելու հաստատ առաջադրութեամբ։ Ի յայնժամ, ազգային միութեան փափաքող ժողովուրդն իւր կրնակն ունենալով, Պիզմարք իւրաւ կրնար իւր խօսքը քաշեցնել, և նորէն յիշխանութիւն վերադառնալ՝ իւր խորհուրդներն ի գործ դնելու համար։ Պիզմարք ի՞նչ կը պատասխանէ այս թելադրութեանց։—«Կը մտնա՛ք թէ ճշմարիտ Բրուսիացի մը չունի և չուզեր ունենալ ա՛ և է իշխանութիւն բայց եթէ զա՛ն զոր իւր թագաւոր իրեն տայ՝ կառավարական պաշտօնի կոչելով զինք»։— Այսչափ միապետական գաղափարով տոգորեալ նախարարապետ մ, հաւանական չէ որ անկումէն ետքն այն միապետական իշխանութեան դէմ դառնայ։

ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Ֆրանձ Եոզէֆ Կայսր մանաւոր ունկնդրութիւն շնորհեց Գերմանիոյ դեսպան Ռէօյս իշխանին, որ յանձնեց Վիլհէլմ Կայսեր մէկ ինքնագիր նամակն, որով երիտասարդ Կայսրը կը հաւատէ թէ Պիզմարք իշխանի հրաժարման պատճառաւ չպիտի փոփոխէ Գերմանիոյ արտաքին աշխարհավարութիւնն, որ Երբեմն Նիզակակցութեան պահպանման վրայ հիմնեալ է։ Վիլհէլմ Կայսր ի վերջոյ կը խնդրէ նոր տեսակցութիւն մ'ունենալ Աւստրիոյ Կայսեր հետ։

—Վիեննայէ կը հեռագրուի թէ զորք կը զրկուի դէպ ի սերպիական սահմանագլուխն, ինչ ինչ պատահականութեանց դէմ զգոյշ գտնուելու համար։

—Աւստրիոյ մէջ ևս գործաւորք անգլիացի և գերմանացի գործատերաց խնդիրքը կը կրկնեն ու կը հաստատեն։

—1848ի մաճառական շարժման պարագլուխ ծերունին Պ. Լուի Քոշութ իւր Ցէ-ՐՈ-ի մէկ նոր հատորը պիտի հրատարակէ ի մօտոյ։ Այս հատորով կը խօսի Աւստրիոյ և Հունգարիոյ իրաւահաւասարութեան թուականին (1867) վրայ, և անտիպ ծանօթութիւններ կուտայ ժամանակին նշանաւոր գործիչներուն վրայ, ինչպէս Ֆէրէնց Տէակ, Անտրաշի, Մէչէնեի, ևն։ Հունգարիոյ նախկին վարչապետն իւր նոր գիրքը կը ստորագրէ սա անունամբ։ Քոշութ, ՀՈՅԱ ԳՈՂՈՒՆՔ, ԳՈՂՈՒՆՔԻՆ ԷՐԷՆՆԵՐԷՆ ՀՐԷՆԼ, ԵՒ ԳՈՐԾԵՑԱԾ։ Ցայտնի է թէ հաւատարմութեան երդում չընելուն համար Ֆրանձ Եոզէֆ Կայսեր և զՀունգարիա Աւստրիոյ հետ կապող երկեակ դրութիւնը չճանչելուն համար, Քոշութ օրինօք դադրած է մաճառ քաղաքացւոյ իրաւունքներէն, և իրեն համար բացառութիւն ընելու նպատակաւ Պ. Թիսայի առաջարկութեան մերժումն այս վերջնոյն անկման անմիջական պատճառն եղաւ։

ՆՈՐ ՇԱՐԺՈՒՄ ՄԸ Ց'ԱՄԵՐԻԿԱ

Միացեալ Նահանգաց սեւամորթները ժամանակաւ Ափրիկէէն գաղթած են հոն։ Երբ Անգլիացիք և այլ Եւրոպացիք գաղթեցին ի Նոր Աշխարհ, այս սեւամորթներն հոն հաստատեալ գտան, և զանոնք իրենց գերի առնելով, չարաչար աշխատացուցին, և մեծապէս պարտական մնացին անոնց աշխատութեան։ Թէեւ Հարաւայնոց և Հիւսիսայնոց պատերազմէն ետքը սեւամորթի գերիք ազատ հռչակեցան և քաղաքացւոյ ամեն իրաւունքները վայելել սկսան, բայց սպիտակ ժողովուրդն երբեք իրեն հաւասար չնկատեց սեւամորթներն, և այս նախապաշարումն ակներեւ է սպիտակ դատաւորաց արձակած վճռոց մէջ, որով միշտ սպիտակամորթին իրաւունք կուտան, եթէ դատ մ'ունենայ սեւամորթի մը հետ։ Հարաւային Քարոլինայի և ուրիշ Նահանգաց մէջ վերջերս սպիտակամորթներուն և սեւամորթներուն միջեւ պատհած արիւնալի կռիւներ տարակոյս չեն թողուր թէ սպիտակները չեն հաշտուած սեւերուն հետ, և թէ սեւերը չեն կրնար զարգանալ սպիտակաց ընկերութեան մէջ։

Ուստի, սեւամորթ քարոզիչներ և գործիչներ քարոզներ, ատենաբանութիւններ և հրապարակագրութիւններ ընելով կը յորդորեն իրենց ցեղակիցները վերադառնալ իրենց նախկին հայրենիքն, յԱփրիկէ, ուր արդէն, արեւմտեան եզերաց վրայ, կայ սեւամորթ կառավարութիւն մը, Լիբերիայի կառավարութիւնն, որ յաջող ճամբու մէջ է, եւրոպեան օրինօք կառավարեալ։ Միացեալ Նահանգաց սեւերը մէկ միլիոն են, և իրենց առաջնորդաց ազդու հրաւէրին անսալով, արդէն քանի մը հազար հոգիք պատրաստուած են դիմել յԱփրիկէ։

Շատ հետաքրքրաշարժ երեւոյթ մ'է որ ամերիկեան ժողովրդեան նման քաղաքակիրթ ժողովուրդ մը անկարող կը լինի հաշտ և խաղաղ կերպիւ կենակցիլ սեւամորթ ցեղին հետ, որ Ամերիկայի մէջ իւր մարթին գոյնով եւեթ կը տարբերի ուրիշ ամերիկեան քաղաքացիներէ։

—» 115 «—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻԼ ՄԱՌԻ

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԴՐԱԽՏ

ՄԱՍՆ ՋՈՒՐՈՒՐԴ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

—Անպատեհութիւններ կրնան ծագիլ, պարոն դատաւոր, և առաջինը սա կ'ըլլայ հաւանաբար զիս արգիլէք խորհած միջոցս ի գործ դնելէ։

—Ինդիրդ ի՞նչ էր տեսնենք։

—Ինդիրքս սա է որ պարոն դատաւորը հինգ վայրկեան դուրս ելլէ ջաղացքէն, ճիշդ հինգ վայրկեան, ո՛չ իսկ բոպէ մը աւելի, և զիս առանձին թողու Լա Հէօյնին հետ։ Ես ապահով եմ թէ պիտի համոզեմ զինքը, եւ երբ պարոն դատաւորը ներս մտնէ, բոլորովին փոխուած և յօժարակամ պիտի գտնէ զայն։

Դատաւորը թերեւս կիսովին միայն հասկցաւ։

—Այնպէս թող ըլլայ, ըսաւ։

Ու գնաց գլանիկ մը ծխել ջաղացքին անիւին մօտ, որ անշարժ կը մնար ջաղացպանին մեկնելէն ի վեր։

Երբ Լա Հէօյնին հետ առանձին մնաց, Մարէաքս, ժպտելով անոր մօտեցաւ։ Գեղեցկուհին անոր երեսը կը նայէր ատելութեան աչքերով։ Շրթունքը բարկութենէն կը դողդողային։

—Լրտե՛ս, ըսաւ քթին տակէն։

—Ուզածդ ըսէ, ես չպիտի բարկանամ։ Մինակ կ'ուզեմ համոզել զքեզ թէ կը սխալիս դատաւորին չհնազանդելով, երբ կը հրամայէ քեզ ետ տալ... գտած ստակդ։

—Այդ ստակը մերն է։

—Ո՛չ, այն ատեն միայն մերը պիտի ըլլայ, երբ տարի մը անցնելէ յետոյ զայն կորսնցուցողն երեւան չելլէ։

Լա Հէօյն, յամառ ու սրամիտ, կը լռէր։

Մարէաքս կամացուկ մը գրպանէն հանեց ոստիկանաց յատուկ հիւսուած չուան մը։

Եւ գորովալիր ձայնով մը։

—Պիտի հարկադրես զիս որ քաղցրութիւն բանեցուցնեմ, ըսաւ։

Ժամացոյցը հանեց։

—Դեռ երեք վայրկեան կայ։ Ժամանակ ունիմ։

Լա Հէօյն անոր երեսը կը նայէր, առանց հասկնալու։

Մարէաքս յանկարծ բռնեց անոր ձեռքէն ուժգնապէս, եւ ժամանակ չթողլով որ գեղկուհին կասկածի թէ ի՞նչ պիտի ընէր, չուանն անոր դաստակէն անցուց, փայտէ կոթերը իւր ձեռաց մէջ պահելով ու արագ արագ դարձուցանելով զանոնք, մինչեւ որ չուանը թեթեւապէս մարթը սեղմեց։

—Ի՞նչ կ'ընէք, ըսաւ Լա Հէօյն ոտքի ելլելով։

—Քաղցրութեամբ կը գործեմ, պատասխանեց ոստիկանը պլարիւնութեամբ։

—Այս չուանը կը քակէ՞ք։

—Այն ատեն միայն, երբ մեր ուզած տեղեկութիւնը տաս։

—Ամենեւի՞ն։

—Ամենեւի՞ն։ Չափը կ'անցուցեր...

Մարէաքս չուանն անգամ մըն ալ դարձուց։

—Ա՜յ, գոչեց պառաւը, գէշ կը ցաւի։

—Բայց ո՛չ։

—Դաստակս պիտի կտրես։

—Բայց ո՛չ, բան մը չեմ կտրեր։

Եւ աւելի ուժով սեղմեց։

Լա Հէօյն գունատեցաւ։ Մարէաքս ապուշի պէս կը ժպտէր։

—Կը տեսնե՞ս, Լա Հէօյն, ըսաւ, զքեզ համոզելու համար քաղցրութիւն կը բանեցնեմ։ Բայց զգուշացի՛ր, եթէ հարկադրես զիս, այն ատեն պիտի ստիպուիմ բռնութիւն բանեցուցնելու։

Գեղկուհին՝ կապած, ցաւէն, բարկութենէն ու սոսկումէն խելայեղ, ինքզինքը կը պաշտպանէր ու ոտնամաններով սաստիկ հարուածներ կուտար Մարէաքսին։ Իսկ սա կը չատանար, ընդունած ամեն մէկ հարուածին քիչ մը աւելի ուժով սեղմելով, ու կ'ըսէր։

—Քաղցրութիւն, Լա Հէօյն, քաղցրութիւն։ Բնաւորութիւնս չես կրնար փոխել։

Վերջապէս, Լա Հէօյն՝ զսպուած՝ աթոռին վրայ ինկաւ։

—Ա՛լ չեմ դիմանար, գոչեց։

—Ուրեմն խօսէ՛։

—Վեց հազար ֆրանքը Շանդկրըլէի ծառաստանին մէջն է։

—Մառաստանն ընդարձակ չէ, այսու հանդերձ կարելի է պանքոտներն այնտեղ փնտռել տասներկու ժամ առանց գտնելու։ Դու ինքդ պիտի առաջնորդես ինծի։

—Լա՛ւ։

—Առաջ անցի՛ր։

—Չուանը քակէ՛։

—Աւասիկ։

Ոստիկանը կապանքը քակեց։ Ու ժամացոյցն հանելով։

—Հի՛նգ վայրկեան։ Գիտէի որ աւելի ժամանակի պէտք չիկար։

Դուրս ելան։ Բակէն անցնելու ժամանակ, Պ. Բէռօշէլի հանդիպեցան որ անհամբերութեամբ կ'սպասէր։

—Համոզեցի, ըսաւ Մարէաքս՝ Լա Հէօյնը ցոյց տալով, որ գլուխը կախ, չբրթունքը նենգաւոր ժպիտով մը կիսաբաց, աչքերը մոլորուն, ոստիկանին վրայ յարձակելու եւ զայն խեղդելու երեւոյթ մը ունէր։

—Ո՞ւր կ'երթաք, հարցուց դատաւորը։

—Վաքը՝ ծառաստանը, պահուած գանձը հանելու։

Երեքը մէկանց հոն գացին։

Հինգ վայրկեան յետոյ, մատներով աւազը փորելով, գեղկուհին կը գտնէր տուփը եւ Մարէաքս անոր մէջէն կը հանէր հազար ֆրանքանոց հինգ տոմսերը որք կը փնտռուէին։

Լա Հէօյն ոստիկանին ամեն մէկ շարժման կը հետեւէր անյագ նայուածքով մը։ Ճշմարիտը, եթէ Մարէաքս մինակ եղած ըլլար կրնար փորձանքի հանդիպիլ, հանկառակ իր ոյժին։ բայց փոյթը չէր ըներ։

—Ա՜հ, ըսաւ, չենք սխալած։ Տեսէ՛ք, պարոն դատաւոր։

Եւ պանքոտներէ մին Պ. Բէռօշէլի ցոյց տուաւ։

Այդ տոմսին թիւն էր 796 781։

Երկրորդ տոմսն էր այս որուն թիւը գիտէին եւ որուն Ռուբաժոյի տունէն անյայտացումն ստուգուած էր։

Դատաւորը Լա Հէօյնին ուղղեց այն հարցումն որուն չէր կրցած պատասխանել Միա-ա-Մօտ։

—Այս տոմսերէ մին, սա՛, Պ. Ռուբաժոյի տան մէջ կը գտնուէր անոր մահուան վայրկենին։ Ինչպէ՞ս կ'ըլլայ որ քու քովդ կը գտնուի հիմա։

—Ես ի՞նչ գիտնամ, թոթովեց Լա Հէօյն դողդողալով։ Շատ խորամանկ ըլլալու էք որ այսպէս յանկարծ կ'ըսէք թէ պանքոտներէ մին հայր Ռուբաժոյին կը պատկանէր։ Ի՞նչ ապացոյց ունիք։

—Ագկից աւելի պարզ ի՞նչ կայ։

Եւ դատաւորն իր յուշատետրին մէջէն ցոյց տուաւ 796—781 թիւը։

—Տե՛ս։

Հանկառակ իր արեւակէզ դէմքին, Լա Հէօյն գունատեցաւ։ Ի՞նչ կ'ուզէր քաջ երեւալ։ Ամրողջ մարմնովը կը դողար։ Եւ սակայն, հանկառակ իր զգացած սոսկալի երկիւղին, համարձակութիւն ունեցաւ ըսելու։

—Ուրեմն, ապահովապէս, ստակը կորսընցնողն ու զայն գողցողը միևնոյն անձն է։

Դատաւորն անոր ալ պատմել տուաւ այդ կարծեցեալ գիւտին պատմութիւնն, ապահով ըլլալու համար թէ գեղկուհւոյն հաղորդելիք մանրամասնութիւնք կը համապատասխանէին ամուսնոյն տուած տեղեկութեանց։

—Այո՛, պարոն դատաւոր, կըսէր Լա Հէօյն, էրիկս էր այս ստակը ծառաստանին մէջ գտնողը։ Չէինք կրնար գուշակել, այնպէս չէ՞, թէ այս ստակը Պ. Ռուբաժոյէն գողցուած էր։ Ա՜հ, եթէ գիտցած ըլլայինք, պիտի փութայինք ձեզ բերել յանձնել զայն, պարոն դատաւոր, վասն զի անպարկեշտ անձեր չենք, ինչպէս կը տեսնէք։ Պ. Մարէաքսն, որ զմեզ կը ճանչնայ, թող վկայէ։ Այնպէս չէ՞, պարոն Մարէաքս։

Երբ ջաղացք վերադարձան, Պ. Բէռօշէլ ճանբան հարցուց ոստիկանին։

—Այս կնոջ վրայ ի՞նչ կարծիք ունիս։ Զինքը յանցաւոր կը կարծե՞ս։

—Երեւոյթէն դատելով, պարոն դատաւոր, կերպարանքէն դատելով, անպիտանին մէկն է։ Մինչդեռ Միա-ա-Մօտ իբր ազնիւ մարդ մը կրնայ նկատուիլ։

—Ի՞նչ կ'ըսես, ձերբակալե՞նք զինքը։

—Ամապարելու բան մը չունինք։ Չի կրնար փախչիլ։ Եթէ ուզէ իսկ։ ո՞ւր պիտի երթայ։ Որ ատեն որ ձերբակալել ուզենք, կրնանք գտնել զինքը։

(Շարունակելի)

ՎԻԿՏՈՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ ԵՒ ԻՒՐ ԹՈՌ

Վիքթորիա թագուհին Էդս-լէ-Պէնէ մեկնելուն իւր թոռան՝ Վիլհէլմ Կայսեր հետ պիտի տեսակցի ի Տարմշթատ։ Այս տեսակցութեան քաղաքական կարեւորութիւն կը տրուի։ Վիլհէլմ Կայսր և Զօր. Քափրիվի իրենց քաղաքականութեան նշանաբան գրած են ո՛չ միայն Երրեակ Դիզակցութիւնը պահել այլ և Անգլիոյ հետ առանձին համաձայնութեամբ մը վարուիլ։ Կոմս Հէրպերտ և իւր հայր Անգլիացիները վշտացուցած էին զանազան խնդրոց մէջ։ Վիլհէլմ Բ. Պիզմարք իշխանի հրաժարման վրայ իւր հայեացքն ամենէն առաջ Կայզէրի իշխանին բացաւ, և իւր մտերմերու և իւր մամուն հետ յարաբերութիւնները մտերմացնելը կը վերագրուի ո՛չ միայն ազգականութեան զգացման այլ և կան և անգլիական քաղաքականութեանց համաձայնութեան, որ արդէն իրագործուած է ափրիկեան գաղթական խնդրոց մէջ։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴՈՐՄԵՐ

Նիսի մեծահարուստ երեսփոխան Պ. Պիշոֆսկայմի ընտրութիւնն անվաւեր հռչակած էր Երեսփ. ժողովը, ապացուցուած լինելով որ շատ մարդիկ այս սեղանաւորին պարտաւորացած էին իւր բազմաթիւ դրամական ձեռնտուութեանց պատճառաւ։ Նոր ընտրութիւն կատարուելով, Պ. Պիշոֆսկայմի տեղ Պ. Ռէպէթիի ընտրեցաւ, որ յառաջ պուլանժէական էր, բայց տեսնելով թէ ի Փարիզ Պուլանժէականք Ընկերվարականաց և Ազ իշխանականաց հետ դաշնակցելու ծանծաղամտութիւնն ունեցած են, հրաժարած է պուլանժէականութենէ։

—Է. Մոնսապրէի տեղ, որ սրտաշարժ քարոզով մը հրաժեշտ տուաւ իւր հազարաւոր ունկնդրաց, շատ մը փարիզեան լրագիրք Նոթռ-Տամի քարոզիչ խնդրած էին զՀ. Ֆիտոն։ Այն վարդապետն է սա որոյ քարոզները Փարիզի Աբքեպիսկոպոսը մի քանի տարի յառաջ դադրեցուցած էր, որովհետև Եկեղեցին հանրապարական կամ ժողովրդական գաղափարին հետ հաշտեցնելու դիտմամբ կը քարոզէր Հ. Ֆիտոն։ Այժմ Արքեպիսկոպոսի Տոմինիկեան կրթարանին տնօրէն անուանեցաւ այս պերճախօս քարոզիչ։

ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

Եկեղեցական երեսփոխանաց ընտրութիւնն անցեալ երկուշաբթի օր Պատրիարքարանի մէջ կատարուելով, հինգ եկեղեցականք քուէից բացարձակ առաւելութեամբ ընտրուած և համեմատականի մնացած էին հետեւեալ եկեղեցականք.

1. Արժ. Տաճատ Ծ. վրդպ. Ոսկանեան
2. » Խորէն Ծ. վրդպ. Կիւրոյեան
3. » Սահակ Ա. քհնյ. Տ Սարգսեան
4. » Յովհան. » » Մկրտեան
5. » Խորէն » » Փէհլիվանեան
6. » Աբիստակէս » Զիզմէճեան

Արդ, երեկ այդ համեմատականի ընտրութիւնը կատարուեցաւ ի Պատրիարքարան, կրօնական ժողովոյ կողմէ կարգեալ յանձնաժողովոյն միջոցաւ։

Ընդ ամենը 75 քուէ եկած էր, որոց եօթն անձամբ և մնացեալները նամակաւ։ Քուէարկութիւնը կատարուելով, այդ վեց եկեղեցականներէ հետեւեալները ընտրուեցան.

1. Արժ. Տ. Սահակ Աւագ քահանայ Տ. Սարգսեան, քուէ. 67 Դ. վիճակ.

2. Արժ. Տ. Յովհաննէս Աւագ քահանայ Մկրտեան, քուէ 43, Դ. վիճակ.

3. Արժ. Տ. Խորէն Ծ. վրդպ. Կիւրոյեան, քուէ 35, Դ. վիճակ.

Հետեւեալ եկեղեցական ութ երեսփոխանաց ընտրութիւնը կատարուած և երեսփոխան ընտրուած են հետեւեալ եկեղեցականք.

1. Գեր. Մելքիսեդեկ եպիսկ. Մուրատեան
2. » Գրիգորիս » Ալէքսիճեան
3. » Գարեգին » Սրուանձտեանց
4. » Ներսէս Ծ. վրդպ. Արսլանեան
5. Արժ. Յակոբ » » Աշոտ
6. » Խորէն » » Կիւրոյեան
7. » Տ. Սահակ Ա. քհնյ. Տ. Սարգսեան
8. » » Յովհաննէս » » Մկրտեան

Պէրպէրեան Ռէթէոս և Գուրգէն Յակոբ էֆէնտիներու նախաձեռնութեամբ յանձնաժողով մը կազմուած է, տօնելու համար Մատաթիա Գարագաշեան էֆէնտիի գրական գործունէութեան յիսնամեայ յոբելեանը։

Այս յանձնաժողով երեկ իւր առաջին նիստը կազմեց ի խորհրդարանի Ղալաթիոյ և նախնական խորհրդակցութիւններ կատարեց։

Ռուսոսթոյէն մայրաքաղաքս հասած տեղեկութիւնք կը ծանուցանեն թէ անցեալ երկուշաբթի օր Հայոց եկեղեցւոյ փողոցին մէջ հրդեհ ծագելով, առաջնորդարանը, դպրոց մը ու երկու տուներ հրոյ ճարակ եղեր են։ Թէ՛ կառավարական պաշտօնէից և թէ՛ ժողովրդեան կողմէ եղած ջանքերու շնորհիւ, հրդեհին առաջքն առնուեր է, որ կրնար աւելի մեծ ազէտներ պատճառել։

ՀԱՆԴԷՍ ՓՈՔՐԻԿ ՄԱՆԿԱՆՑ

ԾԱՐԱՄԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԳԱՏԸ ԳԻՒՂԻ

Դասը-գիւղն կը գրեն մեզ.

Ծաղկափթիթ գարնան հետ պիտի դան ընդհանուպ դպրոցական հանդէսներ, և կարծես անոնց նախատօնակն էր այն՝ որ կատարուեցաւ երէկ ի Դասը գիւղ յԱրամեան վարժարանի քառամեայ քննութեանց առթիւ։ Գեղեցիկ հանդէս մանաւանդ է շրջս, Արամեան վարժարանի նախասրահն եւ։ Հանդիսին կը նախագահէ Դեր. Մելքիսեդեկ Սրբազան։ Ներկայ են վարժարանի Հոգաբարձութեան և խնամակալութեան անդամք, նոյնպէս ծնողք ոմանք։

Հանդէսը կ'սկսի ծաղկոցի սանունց և սանու հեաց մարմնամարզի փորձերով։ ըզմայլմամբ կը դիտուին նոցա կատարած զանազան անչափթ շրջանները, ճապուկ և գիւրաթեք շարժումներն, յաջ եւ յահեակ, ի վեր եւ ի վայր գլուխներու հակումներ, եւ կանոնաւոր գնացքներ, որք դաշնակի որոտմանց հետ ներդաշնակ եւ զուգաձայն կուգան։ Այդ փոքրիկներ ի բենց խաղուց մէջ պահ մը խառնուրդ կը ձեւացնեն, եւ ահա անդրէն իրենց որոշեալ դիրքը գրաւելով իրենց ուղղութեամբ կը ցուցնեն թէ շատ կանուխն ուսած են կարգապահութիւն։ Անոնցմէ ոմանք ունեցան արտասանութիւններ առակներ, մանկական դէպքեր, ընդմիջմամբ յարմարագոյն երգոց։ Ապա երգերու միջոցաւ մեր առջեւ կը պարզեն իրենց սիրուն կեանք, իրենց անեղ զբաղմունք, դպրոցի բարոյականն, առանձին կամ խմբովին երգելով քաղցր։

Այդ երգերէ մին այսպէս կ'սկսի.

Մենք ամ նքնիս ալ ձեր առջեւ ենք կանգներ,
կը մտածէք անշուշտ թէ շատ փոքր ենք դեռ,
այց թէ կ'ուզէք, պատուենք գործեր ամբաս,
թէպէտ անանք փոքրիկ, սակայն են միշտ լաւ։

Ծաղկոցի մանկանց այս հաճելի հանդիսին մասնակցեցան վարժարանի ուսումնարանաց մանչ տղայք և օրիորդք իրենց յաջող արտասանութեամբ, ինչպէս պարոնայք՝ Հրանտ Շահնազարեան, Երուանդ Տէվլէթեան, Էլեոն Անդրանիկեան, իսկ օրիորդաց կողմէ՝ Սաթենիկ Արապեան, Արաքսի Փափամաճեան, Ագապի Փափազեան, Արաքսի Շիրազեան։ Այս վերջին երեք օրիորդք յոյժ բնական իմն ձեւացուցին [illegible]ի կատակերգութեանց մի մի ծաղաշարժ տեսիլ, (Ռսեալ տիրուհին և տգէտ աղախին)։

Հանդէսը վերջացաւ։ Սակայն չէր այն անակնկալ մը Արամեան վարժարանի համար՝ որ լաւագոյն ուղղութեամբ կ'ընթանայ միշտ ի կատարելութիւն, և շնորհիւ Դասը-գիւղի պատուաւոր Ազգայնոց բացառիկ դիրք մը կը գրաւէ բազում ժամանակէ ի վեր։

ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴ ՄԱՑՐ-ԵԿԵՂԵՑԻՈՑ

Նորակաղմ Թաղ. Խորհուրդս ձեռնարկելով ի պաշտօն, անմիջապէս իւր գլխաւոր ուշադրութիւնը նուիրեց Ս. Զատկի առթիւ հաւաքելի իւղագնի տրոց, յոյս մեծ ունենալով որ Մայր Եկեղեցւոյ ազնիւ թաղեցիք յօժարակամ պիտի ընձեռեն իւրեանց օժանդակութիւն՝ մասնակցելով սոյն տրոց։ Ուրախ է խորհուրդս տեսնելով որ իւր յոյսն ի դերեւ ելած չէ։ Եւ սակայն, որովհետեւ Թաղ. Խորհուրդս տասնօրեայ սուղ միջոցի մէջ կարող չէր ի ձեռին ունենալ թաղեցւոց կատարեալ և անթերի ցուցակ մը, ուստի Մայր Եկեղեցւոյ թաղի ընդարձակութեան և թաղեցւոց հոծ և ստուար թուոյն հանդէպ իրաւամբ կրնայ խորհիլ որ թերեւս գտնուին ոմանք ի թաղեցւոց, որոնց անուանք մոռցուած լինելով, նամակ ընդունած չլինին, կամ պատահին այնպիսիք որոց իւղագնի տոմսերուն գնոց մէջ թերութիւնք ապրած լինին։ Սոյն անուշադրութեան մասին, եթէ իրօք տեղի ունեցած է, կը ցաւի Խորհուրդս։

Այլ սակայն վստահ ազնիւ թաղեցւոց ներողամտութեան և յօժարամտութեան, կը փութայ հրապարակաւ կոչումն ընել նոցա բարեպաշտական զգացմանց, և առնոնցմէ որք ցարդ չեն կրցած մասնակցիլ իւղագնի տրոց խնդրել որպէսզի հաճին սատարել խորհրդոյս սկզբնական ջանից, մտադիր նուիրելով իւրեանց իւղագնի նըպատան ի պայծառութիւն Պատրիարքական ընդարձակաձաւալ եկեղեցւոյ։

Ի դիմաց Թաղ. Խորհրդոյ
Մայր Եկեղեցւոյ

Ատենադպիր Ատենապետ
ՆԱՄԻՊ ԳԱՐԱԳԵՇ ՊՕՂՈՍ ԷՖԷՆԴԻՆԱՆ

ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ընտանիքն և պարագայք հրապարակաւ իրենց շնորհակալիքը կը յայտնեն ամէն ազգականաց և բարեկամաց, որք ներկայ գտնուելով ՏԻՏԻՆ ՆԵՄՔԱՒՐ ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆԻ յուղարկաւորութեան հոգիսին, իրենց ցաւակցական զգացմանց հաւաստիքն արտայայտեցին։

Բնիկ Լոնտոնցի՝ լաւ յանձնարարեալ և Ֆրանսերէն լեզուի ըստ բաւականի ծանօթ՝ Անգլիացի մի օրիորդ՝ պատրաստ է ընտանեաց մէջ աւանդել Անգլիերէն դասեր իրր այցելու կամ մնայուն ուսուցիչ։

352 5—5

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԻՈՅ ԴԱՀՈՒԺԱՌԱՆԳՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

ԻՇԽԱՆՆ Ի ՏԱՐՏԱՆԷԼ

Վիքթոր Էմմանուէլ իշխանն ի Տարտանէլ, ժամանելուն ամսոյներու վրայ դրոշակներ պարզուեր, զինուորք բարեւի կեցեր և այլ և այլ տեղերէ թնդանօթներ եւս արձակուեր են։ Պիզայի կառավարիչը, Նեղուցին հրամանատարի փոխանորդն և Տարտանէլի իտալական հիւպատոսը Թէէ-էֆ շոգենաւն երթալով բարի գալուստ մաղթեր են Ն. Բարձրութեան։ Շոգենաւը ժամու մը չափ Տարտանէլի առջեւ կենալէ յետոյ Տարտանէլէն դուրս գտնուած Գումալէի ամրոցներուն առջեւ գնացեր է։ Իշխանն անդ ցամաք ելեր է հետն ունենալով իւր հետեւորդները, Պիզայի կառավարիչը, Նեղուցին հրամանատարի փոխանորդն և Տարտանէլի իտալական հիւպատոսը։ Ն. Բարձրութիւն անդ աչքէ անցուցեր է բոլոր նոր ամրոցներն ու հին թնդանօթներն և յետոյ շոգենաւ վերադառնալով Հիսարլիքը գնացեր և այցելեր է Տրովադայի աւերակները։ Իշխանն անդ ներկայ գտնուեր է ի պատիւ իրեն տրուած հացկերոյթի մը։ Իշխանն՝ իւր հետեւորդաց և կայս. թիկնապահ Ահմէտ փաշայի ու Շէֆիգ պէյի հետ իւր լուսանկարն հանել տալէ յետոյ մեկներ է Թէէ-էֆ շոգենաւով։ Երբ Թէէ-էֆ Տարտանէլի առջեւ ժամաներ է, Պիզայի կառավարիչը, Նեղուցին հրամանատարի փոխանորդն և իտալական հիւպատոսն հրաժեշտ առնլով իշխաններն մեկներ են։ Պիզայի կառավարիչը Տարտանէլի մէջ պատրաստուած մէկ քանի գեղակերտ սափորներ նուիրեր է իշխանին։ Շոգենաւն անտի մեկներ է ի մայրաքաղաքս։

ԻՇԽԱՆԻՆ ԱՍՏԱՆՈՒՄԸ

Իշխանն երէկ ժամ 9ին Տոլմա-Պաղչէի առջեւ ժամանեց Թէէ-էֆ շոգենաւով և անտի Նէէրա-ը շոգեմակոյկով ցամաք ելնելէ յետոյ պալատական կառքերով կայս. պալատ գնաց։

Վեհ. Սուլթանին հրամանաւ սենեկապետ Էմին պէյ իշխանին քով գնաց և յանուն Ն. Վեհափառութեան հարկ եղած մեծարանքները մատոյց։

Ն. Բարձրութիւն գիշերուան ժամ 1ին ի Բեբա իտալական դեսպանատունը գնաց և անդ ներկայ գտնուեցաւ ի պատիւ իրեն տրուած հացկերոյթի մը։ Սեղանին ներկայ գտնուեցան նաեւ դեսպանը, դեսպանատան պաշտօնեայք, իշխանին հետեւորդք և կայս. թիկնապահ Ահմէտ փաշա ու Շէֆիգ պէյ։ Սեղանէն յետոյ իշխանն ընդունեց մայրաքաղաքիս օտար դեսպանաց այցելութիւններն և յետոյ կայս. պալատ վերադարձաւ։

Վիքթոր Էմմանուէլ իշխանն այսօր պիտի այցելէ Տոլմա Պաղչէի պալատն և յետոյ կայս. պալատ երթալով պիտի ճաշէ և դիտէ Սուրբէի Հիմայունի հանդէսը։ Ն. Բարձրութիւն յետոյ Պոլսոյ կողմն անցնելով պիտի այցելէ կայս. թանգարանը. վաղը թարապիա պիտի երթայ ներկայ գտնուելու համար օթեւանի մը մէջ ի պատիւ իրեն տրուած հացկերոյթի մը և յետոյ Պէնտերը պիտի երթայ։

Իշխանը վաղը թարապիա երթալէ առաջ Ներսէյ պիտի գտնուի Վեհ. Սուլթանի ծննդեան տարեդարձին առթիւ կայս. պալատան մէջ կատարելի ընդունելութեանց։

Վիքթոր Էմմանուէլ իշխանն երեքշաբթի օր կը մեկնի մայրաքաղաքէս ի Գաթուում։ Սէ-էրէ-էյէ շոգենաւը Ն. Բարձրութեան տրամադրութեան ներքեւ պիտի դրուի առաւի մինչեւ ի Գաթուում։

ԵՐԵԿԻ ՍԷԼԱՄԼԸՔԸ

Վեհ. Սուլթանն հանդիսաւոր կերպիւ Համիտիյէ մզկիթը գնաց երէկ և անդ տեղի ունեցաւ Սէլամլըքի արարողութիւնը։ Ն. Վեհափառութիւն ուրբաթու աղօթքը կատարելէ յետոյ մզկիթի պատուհանէն դիտեց զօրահանդէսն, եւ վերջը միեւնոյն հանդիսիւ կայս. պալատ վերադարձաւ։

Կայս. մասնաւոր Արկեղ պաշտօնատան մէջ կը գտնուէին այլ եւ այլ օտարազգիք եւ քառասունի չափ անգլիացի, ֆրանսացի, գերմանացի եւ աւստրիացի զբօսաշրջիկներ։ Իսկ նոյն պաշտօնատան արտաքին մասին մէջ կը գտնուէին ութսունի չափ հունդարացի զբօսաշրջիկներ, որք Վեհ. Սուլթանի անցած պահուն եկեղեցին գոչեցին։

Վեհ. Սուլթանին հրամանաւ թիկնապահ Բիզա փաշա եւ սենեկապետ Էմին պէյ յանուն Ն. Վեհափառութեան հարկ եղած մեծարանքները մատուցին այդ հիւրերուն։

ՊՂՐԱԳ ԿԻՃԷՍԻ

Երէկ գիշեր Պէրաթ Կիճէսիի տօնն ըլլալով, պաշտօնի վրայ պտտուող եւ անպաշտօն բոլոր նախարարք ինչպէս նաեւ կրօնական, քաղաքային ու զինուորական պաշտօնեայք այսօր կայս. պալատ գնացին ի շնորհաւորութիւն և արժանացան Վեհ. Սուլթանին մեծարանաց։

ՍՈՒՐԲԷԻ ՀԻՄԱՅՈՒՆ

Սուրբէի Հիմայունն, որ Էվգաֆի նախարարութեան կողմէ պատրաստուած էր, առջի օրն Եըլտըզի կայս. պալատը տարուեցաւ և դետեղուեցաւ ներքինապետ Եավէր աղայի պաշտօնատան առջեւ կանգնեալ վրանի մը մէջ, ուր բազմաթիւ իսլամք ուխտի գնացին։ Քիչ յետոյ կայս. պալատան պաշտօնեայք աղօթքներ արտասանելով Սուրբէի Հիմայունը տարին կանանոցն և քաշուեցան։ Ներքինապետ Եավէր աղա, իւր պաշտօնական գաւազանն ի ձեռին, կը նախագահէր հանդէսին։ Կանանոցին մէջ ըստ սովորութեան, զարդարուեցաւ Սուրբէի Հիմայունն որ յետոյ միեւնոյն հանդիսիւ առաջուան տեղը բերուեցաւ։ Երէկ գիշեր մինչեւ առաւօտ կրօնական պաշտօնեայք աղօթքներ կատարեցին և կրօնական երգեր երգեցին։

Սուրբէի Հիմայունի հանդէսն այսօր տեղի կ'ունենայ որոշեալ ժամուն։

ԵԱՆՊՕԼՈՒ-ՊՈՒՐԿԱԶԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Մայրաքաղաքիս յոյն լրագիրք հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն Եանպօլու-Պուրկազի երկաթուղւոյն վրայ։

Եանպօլու-Պուրկազի երկաթուղւոյն շինութիւնք աւարտելու վրայ են և ի մօտոյ տեղի պիտի ունենայ պաշտօնական բացումը։

Կ. Պոլսոյ և Տէտէ-Ագաճի նաւահանգիստներէն Բրէնէրով ի Պուլկարիա ղրկուած ապրանքներն, յետ այսորիկ ուղղակի Պուրկազ պիտի ղրկուին այդ երկաթուղւոյ միջոցաւ փոխադրուելու համար։

Պուրկազի նաւահանգիստը բաց ըլլալով, նաւերը չեն կրնար անդ պատսպարուիլ։ Այդ պատճառաւ Պուլկարիոյ հետ կատարուած առեւտուրի կիսդրանին փոփոխումը թէեւ առ այժմ զգալի չդիտի ըլլայ, սակայն պուլկար կառավարութիւնն այդ պակասն ալ պիտի լրացնէ Պուրկազի մէջ նաւահանգիստ մը շինելով։ Եթէ այդ նաւահանգիստ շինուի և ամէն կարգի նաւեր կարենան անդ մտնել, Տէտէ Ագաճի նաւահանգիստն անտարակոյս պիտի կորսնցնէ իւր կարեւորութիւն։ Այն անգլիական, ֆրանսական և այլ շոգենաւք որք ցարդ հոն կը հանէին իրենց ապրանքներն, ուղղակի Պուրկազ պիտի երթան։

Այս պարագայ դիտցուցիչ չէ մայրաքաղաքիս թրանսիթի առեւտուրին համար, մանաւանդ որ Պուլկարիոյ առեւտուրը Կ. Պոլսոյ միջոցաւ կը կատարուի։

ԴԵՐՁԱՆԻ ԴՈՐՄԱՐԱՆ

Սէլանիկէն կը գրեն թէ Տիմիթրի և Մանտիլի անուն երկու անձեր ձեռնարկած են դերձանի գործարանի մը հաստատման, Սէլանիկի Ագոսթոս անուն տեղը։

Այդ գործարան ոչ թէ շոգեշարժ մեքենայով այլ ջուրով պիտի բանի, որով Առեւտրական և Հանրօգուտ շինութեանց Նախարարութիւնն արտօնութիւն տալու պէտք չէ տեսած. Այդ գործարանի հաստատութեան համար Եւրոպայէ բերուելիք մեքենաներն ու գործիքները մաքսատուրքէ զերծ պիտի մնան, միայն մէկ անգամի համար։

ՄՍԻ ԳԻՆԸ

Հ-էէէ-ը խօսելով մսի գնոյն բարձրացման, վրայ կ'իմանայ թէ Քաղաքապետութեան ժողովը կոչելով մսավաճառներն ու ոչխարի վաճառականները բացատրութիւն պահանջած է թէ այս բարձրացումը ի՞նչ պատճառներէ առաջ եկած է. և սակայն ժողովոյ այս ձեռնարկն ո և է յոյս մը տուած չէ հասարակութեան օգտին, այսինքն մսի գնոյն նուազման, եւ մսավաճառաց այդ շահադիտութիւնն արգիլելու համար։

ԲՐՈՒՍ. Պ. ԲՈԴԷՆ

Բարիզի հանրածանօթ բժիշկ Պ. Բոդէն, երէկ առաւօտ մայրաքաղաքս եկաւ. Պ. Բոդէն մասնաւորապէս Ալիէնք կոչուած էր հիւանդի մը համար և Բարիզ դառնալէ առաջ կ. Պոլսէ ուզած է անցնիլ։ Մեծանուն բժիշկը երկուշաբթի երեկոյ կը մեկնի ի Բարիզ, Արեւելեան ճեպընթաց կառախմբով։ Կ. Պոլսոյ բժշկական մարմինը այս երեկոյ հացկերոյթ մը կուտայ ի պատիւ մեծանուն ուսուցչին, ի Բեբա, Սէրքէ տ'Օրիան։

ԱՆՏԱՌԱՑ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Ելմտական Նախարարութիւնն հրահանգ ուղղած է ամէն կողմ թէ Շիլէի, Պէյքօզի, Գարթալի եւ Կէյպզէի մէջ գտնուած անտառներու արտադրութենէն առնուած դրոշմաթուղթի տուրքէն զատ, անտառի տուրքի փոխարէն առնուած աւանդի գումարը չառնուի յետ այսորիկ։ Նախարարութիւնը ծանուցած է որ այն էնմախաղէէներն, որք Իտարէի ժողովոյ կողմէ կը տրուին՝ մինչև որ աւարտին Թափուի էնէներու քննութենէն վերաբերեալ գործողութիւնք, պահուին, եւ այսպէս արտօնուին նոյն անտառաց արտադրութեանց փոխադրութիւնը։

ՔԱՋԱՐԻ ԿԻՆ ՄԸ

Զմիւռնիոյ Խըտէ լրագրոյն մէջ կը կարդանք հետեւեալ դէպքն որուն հերոսուհին է Թուրք կին մը։

Թիրէի մէջ Ահմէտ անուն մարդու մը քսանամեայ կինը գիշեր մը մինակ կը մնայ իւր տան մէջ և դրացիներէն ութ տարեկան աղջիկ մը իւր քով կ'առնու իրրեւ ընկեր։ Գիշերուան ժամ 8ին կինը կ'արթննայ սոսկալի երազի մը ազդեցութենէն, և նոյն պահուն կը տեսնէ որ իւր պառկած սենեկին դուռը կը խառնին։ Կինը կը հարցնէ. «Ո՞վ կայ հոն»։ Դուրսէն ձայն մը կը հրաւիրէ զինքը դուռը բանալ, ըսելով որ զինքը պիտի փախցնեն։ Կինն, որոյ պարկեշտութիւնը ծանօթ է ամենուն, բարկանալով, անմիջապէս իւր ամուսնոյն երկփողեան հրացանը կ'առնու և պատուհանին առջեւ երթալով կը հրաւիրէ զիրենք հեռանալ անկից։ Դուրսը գտնուողները բէվոլվէր ի ձեռին կ'սպառնան և կ'սկսին դուռը կոտրելու աշխատիլ, սակայն կինը հրացանը կը պարզէ և կուրծքէն կը վիրաւորէ Հիւսէյին անուն քսանամեայ երիտասարդ մը որ կինը փախցնելու համար եկողներուն հետ կը գտնուէր։ Հիւսէյին փախչիլ կը փորձէ, բայց մէկ քանի քայլ առնէ յետոյ անկենդան գետինը կը փռուի։

Վեհ. Սուլթանին կողմէ Գոնեայի կուսակալ Սուրուրի փաշայի շնորհեալ ականակուռ Մէճիտիէի պատուանշանը Ն. Վեհափառութեան հրամանաւ պիտի տանի Սուրուրի փաշայի որդին՝ Բ. Դրան Ամէտի դիւանատան քարտուղարներէն Նազիֆ պէյ։

—Պ. Բոլ Պէնտա. որ տասներեք տարիէ ի վեր Սդ-դ-ի խմբագրապետութեան պաշտօնը կը վարէր այնքան արժանեօք, այս առաւօտ մեռաւ, կարճատեւ հիւանդութենէ մը ետք։

—Նէրսէս կը հերքէ Սդ-դ-ի այն լուրը թէ յէրէյի Կուրճի ընկերութեան ապրանքներուն մէջ հրդեհ ծագեր է։

—Զմիւռնիոյ լրագիրք կը պատմեն թէ Թավաս գաւառակի գիւղերէ միոյն մէջ բնակող Մուսթաֆա անուն մարդ մը, իւր կնոջ մահուան պատճառաւ խորապէս բդգածեալ, անձնասպան եղեր է, ինքզինքը ծառէ մը կախելով։

—Այս վերջին օրերս Քիոսի եւ Արչիպելագոսի մէկ քանի կղզեաց մէջ երկրաշարժի սաստիկ ցնցումներ զգացուեր են, առանց ոեէ վնաս պատճառելու։

—Սկէնտիկի լրագրոյն մէջ կը կարդանք թէ տեղւոյն թնդանօթարանին կողմէ անհատներու վաճառուած վառօդներու համար նոր վառօդարան մը պիտի շինուի, որոյ կառուցման ծախքը՝ 28,626 ղրուշ, պիտի հոգեթաթի վաճառեալ վառօդներու հասոյթէն։

—Առեւտրական և հանրօգուտ շինութեանց նախարարութեան կողմէ մասնաժողով մը պիտի ղրկուի ի Զմիւռնիա, քննելու համար Մաղնիսայէն Սոմա շինուած երկաթուղւոյ գիծը։

—Հրէից Թխլամպետի գայմագամը նախընթաց օր կայս. պալատ գնաց և երկրորդ սենեկապետ Հաճի Ալի պէյի միջոցաւ արժանացաւ Վեհ. Սուլթանի մեծարանաց։

ՊԷՎԻԼԱՔՈՒԱ ԼԱ ՄԱՋԱ

Պէվիլաքուա Լա Մաջայի պարգեւաւոր պարտատոմսից վիճակահանութիւնն, որ մարտ 19|31 ին ծանուցուած էր, որոշեալ օրը տեղի ունեցեր է ի Հռոմ։

Հեռագիրը կը բերէ մեզ 250,000 ֆրանքի գլխաւոր պարգեւը շահող բարեբաստ թիւը։ 16 377 Սէրիին 6½ թիւն է։

3532 պարգեւներուն ընդհանուր եւ կատարեալ ցուցակը տպրիլ 10 ին առնուելուն պէս ծրիարար պիտի բաշխուի փափաքողներուն, յիսդբրն Էմէնի, Քարաքէոյ, Տէյիրմէն խան, 14, Կ. Պոլիս։

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ

Ա. Մ. ԳԱԼՐԻՊԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան, որ իւր թղթավաճառանոցը տեղափոխուած է, նիւքսէք Գարաբրամ նոյն կարգն, աւելի վար ԿԿ թիւը։

Այս պատեհութեամբ նոր ապրանքներ հասած են Եւրոպայէն։

ՄԻՇՏ ՁԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ
ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԵԾԱԳՈՒԱԿԱ
359 ՈՒ ՓՈՔՐԱԳՈՒԱԿԱ 4—6

Տես չորրորդ երես PRINTEMPSի ՄԵՆ ՎԱՃԱՌԱՏԱՆՑ ծանուցումը։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

Լոնտոն, 4 ապրիլ

Թոյլ խստիւ կը պարսաւէ Էմին փաշան, Գերմանիոյ ծառայութեան մտնելուն համար։

Հռոմ, 4 ապրիլ

Ռիֆոմա կը ծանուցանէ թէ Ումբերտոյ թագաւորն այսօր Ս. Մոռիս և Ս. Լազարի պատուանշանին բարձրագոյն աստիճանը նուիրեր է առ Պ. Սփիւլէր, որ Ֆրանսական Հանրապետութեան արտաքին գործոց նախարար եղած ատեն այնքան եռանդ համար նպաստած է Իտալիոյ և Ֆրանսայի միջեւ սիրալիր յարաբերութեանց պահպանման համար։

Բարիզ, 4 ապրիլ

Նախարարաց Խորհուրդն զբաղեցաւ սա խնդրով թէ պէ՞տք է նոր զօրք ղրկել ի Տահոմէ։

Քարլսրուէ (Պատէն), 4 ապրիլ

Պաշտօնապէս կը յայտարարուի թէ «անպատկառ ստութիւն» է Տէսլէ Նէ-ի լուրն ի մասին Պատէնի մեծ-դքսին Պերլինէ մեկնման։ Կայսեր հետ մեծդքսին յարաբերութիւնք առաջուընէ աւելի սիրալիր են, և մեծ-դուքսը խոստացեր է առաջուընէ աւելի յաճախակի երթալ ի Պերլին։

Գան, 4 ապրիլ

Կալլէսի իշխանն աստ հասաւ. կայարանին մէջ Ռուսիոյ Միխայէլ և կէորկ մեծ-դուքսերն ընդունեցին զնա։

Լսսէն, 4 ապրիլ

Քրուփի գործարանաց վարչութիւնը կը ծանուցանէ թէ մինչեւ ապրիլ 1 աշխատիլ չուզող գործաւորները պիտի վռնտուին և իրենց յատկացեալ բնակարաններէն պիտի հանուին։

Մատրիտ, 4 ապրիլ

Ճարտարարուեստից մէջ սեփականութեան իրաւանց պաշտպանութեան համար դումարել որոշուած միջազգային դեսպանախորհուրդն ապրիլ 7ին աստ պիտի բացուի արտաքին գործոց նախարարին գահերիցութեանն ներքեւ։

Վիեննա, 4 ապրիլ

Աւստրիոյ-Հունգարիոյ, Թուրքիոյ, Սերպիոյ և Պուլկարիոյ պատուիրակներէն բաղկացեալ երկաթուղեաց յանձնաժողովն աւարտեց իւր խորհրդակցութիւնները։

Որոշուեցաւ Սոֆիայի, Ադրիանուպոլսոյ, Փիլիպէի, Կ. Պոլսոյ, Տէտէագաճի և Պուլկարի գծին վրայ զեղեալ սակագներ հաստատել հաւաքական վաճառաց փոխադրման համար և ի մասնաւորի դուարաց և գարեղէնի փոխադրման համար։ Ուրիշ գլխաւոր վաճառաց վրայ, որպէս երկաթ, շաքար, գինի, և այլն, բացառապէս զեղչեալ սակագիներ ընդունուեցան Սերպիոյ համար, և Սկլանիկի գծին վրայ գրանուող կարեւոր վայրաց համար։

Պելկրատ, 4 ապրիլ

Սքուփչինային մէջ, կառավարութեան հարցում մ'ուղղուեցաւ գաղթական խմբագիր Պ. Սփոլիարիցի Սերպիայէն արտաքսման վրայ

Ներքին գործոց նախարար Պ. Թավչանովիչ յայտագրեց թէ ոստիկանութիւնն իրաւունք ունի գաղթականաց վրայ հսկելու։ Պ. Սփոլիարից օտար (աւստրիական) կառավարութեան դէմ կծու բաներ գրելով ծանր դժուարութիւն յարուցած էր սերպ կառավարութեան։ Սերպիոյ արդի կառավարութեան դէմ ալ անվայել լեզուաւ խօսած էր։

Այս պատասխանին վրայ, ազգային վիճաբանութիւն։ Ընդդիմադիրք պահանջեցին որ ուրիշներ ալ արտաքսուին, և խստիւ քննադատեցին գաղթականաց մասին կառավարութեան ընթացքն։

Նախարարն և մեծամասնութիւնը ջանաց ապացուցանել թէ Պ. Սփոլիարից ո՛չ թէ գաղթական մ'է այլ սերպ կառավարութեան դիտմամբ դժուարութիւն յարուցանելու համար եկած քաղաքական վտանգաւոր գործիչ մը։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 24 մարտ

ԸՆԹԱՑԻԿ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

3 ամիս	Լոնդրայի վրայ (Պանքայի)	110	7/8
8 »	» » (վճարելի)	110	1/2
3 »	Բարիզի » (պանքայի)	22	95
8 »	» » (վճարելի)	23	2 1/8

Օսմանեան Քոնսոլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Մէյսաց. Ս. Սէրթ		20	9
Պարզային գոցուածքէն վերջը	»	20	10
Բերսայի մէջ	»	20	10
Առաւօտեան բացուածքս	»	20	12
Կէս օրին	»	20	13

ԻՍԹԻԳՐԱԶԸ ՏԱԼԻԼի

Երէկ երեկոյ		54	20
Այս առաւօտ		54	23
Կէս օր		54	23

ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺԷԹԹՈՅ

Պանք Օթոման	542 50
Գրէտիթ Լիոնէ	713 75
Իտալական Ռենթ 5 %	92 52 1/2
Հելլենական 5 %	458
Բրիտիշ Թիւրք	491 25
Եգիպտական միացեալ	483 12 1/2
Պանք ոք Բարի	785
Օսմ. մեքս. արժէթուղթ	435
Մուէիզի ջրանցք	2307 50
Սպանիական արտաքին	73 5/8
Զէջ Լոնդրայի վրայ	25 19

Լոնտոնի, Բարի-ՐԹԹի Պուրսի, Վիեննայի եւ Պերլինի Պուրսաները գոց են։

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ՀԱՅ ԱՇԽԱՐՀԻԿ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Հրատարակուեցաւ 31Րդ ԹԵՐԹՆ որ կը հասնի մինչեւ Guichet բառը։

ԴՐԱԽՏԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Բ.

ԱՌՋԻՆԵԿԸ

Տանտա՜ն, պէպէք, տանտանայ,
Տա՛ն տա՛ն, մինչեւ քընանայ.
Օ՜ր, օ՜ր չուզեր, խեղճ կ'ընէ,
Սիրտ պէտք է որ դիմանայ։

Ծափի՛կ, ծափի՛կ, ծիրանի
Կարմիր խընձոր կը լմանի.
Ոսկի դեղձան մազերն ալ
Հովը թել թել կը տանի։

Հո՛փ, հո՛փ, տըղաս, հոպպալայ,
Հո՛փ, հո՛փ ցատկէ որ չի լայ.
Ինդումդէմքին վարդ բացուի,
Աշխարհք ամէն ինն ըլլայ։

Թոմպո՛ւլ, Թոմպո՛ւլ պըտըտիկ,
Իմ դառնուկս է մէկ հատիկ,
Վաղը քունէն կ'արթընայ,
Կը չարժէ թեւն ու տոտիկ։

Եկո՛ւ, հայրիկ, հոպպա տար,
Զէ՛, չէ՛, մի գար, չեմ ի տար.
Անուշ մանչըս քուն ունի,
Քիչ մ'ալ մեծնայ, հապա տար։

Ան ի՜նչ աղուոր հայրիկ է,
Մանչըս ինծի կը ձրգէ.
Ծըփէ աչուիդ անուշիկ,
Տանտան, ծափիկ հերիք է։

Աչուկ պա՛հ պա՛հ ու օ՜ր օ՜ր.
Սիրով մեծցիր օրէ օր.
Ես հայրիկին քով նստիմ,
Երգեմ երգեր նորէ նոր։

Ահա տըղաս տատանի,
Հոգի կուտայ տանտանի.
Դրրի երեսն երեսիս,
Ահա քունը կը տանի։

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԱՆՀԱՄԱՍԱՐ ԵԶՐԵՐ

Ինդեան և Զատկի այցելութիւնք անվերջանալի գանգատանց պատճառ եղած են սկիզբէն ի վեր որ կան, և չատերու համար ճշմարիտ մտահոգութեան առարկայ կը լինին։ «Ուրկէ՞ սկսելու է, Բերայէ՞ն, Օրթագիւղէ՞ն թէ Գալաթիէն, ինչպէ՞ս ելնելու է Իսկիւտարի զառիվերը. կառքը մինչեւ վերջը պահելո՞ւ է թէ ոչ.» Նոյնքան հարցումներ են որ ամեն Ինդեան և Զատկի առաւօտներ ինքնիրեն կ'ուղղուին։ Այցելութեանց միջոցին, նոյն աւուր ժամերգութիւնք, օգը և ժամանակին սղութիւնը հաւասարապէս եւ սովորաբար միակ նիւթերն են խօսակցութեանց, ի մեծ յուսահատութիւն տիկնանց որք չինարէնը նախամեծար պիտի համարին անշուշտ եթէ աւելի շահեկան նիւթերու վրայ խօսուէր։

Սոյն վաղեմի այլ սակայն սիրուն սովորութեան հպատակելու մասին հարուստ դասն ամենէն աւելի ըմբոստ գտնուած է. մեր էֆէնտիները նախամեծար կը համարին և մանաւանդ կը պահանջեն որ ամէն ոք իւր պարտականութիւնը կատարէ առ ինքեանս, բայց թէ իրենք որ և է չնչին պատճառաւ մը չկարենան փոխարինել իրենց ընդունած այցելութիւնքը։

Թողունք այս հին աւանդութեան լաւ և յուսի կողմերու քննութիւնը ուրիշներու և առնենք մի միայն գործնական կողմն որմէ օգուտ քաղել կը փորձէ Ազգ. Հիւանդանոցի Խնամակալութիւնը քանի տարիներէ ի վեր առանց սակայն որ և է յաջողութեան մը յանգելու. կ'ուզեմ ըսել մէկ մէջտեղ վճարելով սոյն այցելութեանց ճանձրութիւններէն զերծ մնալու գաղափարն։

Արդարեւ փորձութիւնը մեծ է մարդուս համար յիշեալ չնչին գումարը վճարելով երկու կամ երեք օր վառարանին դէմ հանգստաւէտ աթոռի մը մէջ ինկած, այցելութիւններն ընդունելու եւեթ հաճոյից արժանանալու, առանց բնաւ անձրեւէն թրջելու, բանթալոնը ցեխոտելու, չոգենաւին վազելու և որ աւելին է չուզած տեղերն երթալու և կասկածելի անուշներ ուտելու կամ օշարակներ խմելու վըտանգներուն ենթարկուելու։ Բայ աստի և ոչ ոք պիտի յանդգնի յանդիմանութիւն մ'ուղղել փոխարէն այցելած չլինելուդ համար։

Սակայն հակառակ այսքան համոզիչ փաստերու ոչինչ արդիւնք կը մտնէ Պատ. Խնամակալութեան սնտուկին մէջ. ի՞նչ է պատճառը։ — Խիստ պարզ. Այն է թէ՝ այսքան հաւասարութիւն ըմբռնելի չէ ահագին դրամատիրոջ մը, վաճառականի մը և պարկեշտ խանութպանի մը կամ արհեստաւորի մը միջեւ։ Ի՞նչ, այս ինչ էֆէնտին մէկ մէնիտով պիտի կարենայ գընել իւր հանգիստը, ինչպէս ոգան, պարոնը կամ տիրացուն։

Հարուստ մը, հաշուելով թէ Զատկի երկու օրերը միայն տեղէն չարժիլ փորձէ, հագիւ մէկ ոսկւով կ'ազատի երթեւեկի ծախսերէն. միջակ վիճակի տէր մարդ մը կարող է երկու երեք մէնիտով իւր գործը տեսնել, աւելի համեստ կացութիւն ունեցողները նուազ կը ծախսեն։ Արդ, ի՞նչպէս խղճի մտօք հաւատալ թէ մարդ 20 դրուշի վճարմամբ կրնայ իւր այցելուական պարտականութիւնը կատարած համարուիլ և միանգամայն դրամական զոհողութիւն մ'ըրած ըլլալ։ Խիստ առաձգական խղճի մը տէր ըլլալու է այս բանիս համոզուելու համար։

Զորեքշաբթի աւուր Աբէ-Եւլի մէջ հրատարակեալ մի քանի անուանք սոյն գիտողութիւնն ընել տուին ինձ։ Անոնցմէ և ոչ մին համոզուած է թէ ճշմարտապէս զերծ կարէ նկատել զինքն Զատկական այցելութենէ։

Ըստ պատշաճի, հետեւեալ կարգադրութիւնն աւելի արդիւնաւոր և աւելի արդար կը լինի։ Երեք դասակարգի բաժանել այցելուները, և ընդունիլ թէ անձ մը որ կը բաղձայ իւր հանգիստը չվրդովել յառաջիկայ տօնական աւուրց մէջ, պարտի առաջին դասակարգին համար, վճարել իւր երթեւեկի ծախուց գումարն ոչ նուազ քան մէկ ոսկի, աւելի նոյնքան գումար մը իբրեւ գին իւր հանգստեան, ըսել է 2 ոսկի։ Երկրորդ դասակարգի համար մէկ ոսկի, իսկ մնացեալք առնուազն մէկ մէճիտ։ Սոյն գումարներն իբրեւ փոքրագոյն համարելով և թողով որ ամէն ոք իւր քմաց և քսակին համաձայն արժեցնէ իւր ծախքն և յոգնութիւնը, կալելի է քիչ շատ մերժենալ իրաւանց սահմանին և այն ատեն միայն կ'արդարանայ մարդ յաչս ժողովրդեան, որ ներկայ դրութեան մէջ կը խնդայ պարզապէս իւր մեծերուն միամտութեան վրայ։

ՅՈՒՅԱՄԱՍ

ՅՈՂԲԱՆԵՏԵԱՆ

ՆԵՐՍԷՍ ԷՖ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

«Դառնագոյն է մահ յերիտասարդութեան եւ չքաւորութիւն՝ ի ծերութեան» կ'ըսէ Թուրք առածն։ Զայդ դառնութիւն խորապէս զգալ կուտայ մեզ մահն այն տարաժամ որ խլեց տարաւ Հայ երիտասարդութեան ընտրելագոյն ծաղիկներէն մին։

Եօթնեակ մը կը բաժնէ զմեզ դժբախտ երիտասարդին մահուան օրէն, և վերջին չարաթ աւուր հոգեհանգստեան արարողութիւնք վախան տուին այն մեռելական հանդիսաւորութեանց որ նշանակ էին հասարակաց խորին վշտակցութեան։ Այլ նոցա համար որք ծանօթ էին ի մօտոյ Ներսէսեանի ընտիր բարեմասնութեանց, հազուագիւտ ձրից եւ արժանեաց, ընդ երկար անմոռանալի պիտի մնայ իւր կըսկիծն։ Երիտասարդ հանճարեղ, քաջուսումն եւ ազնուաբարոյ, յօժարակամ բարեգործութեան, յոյժ պատուաւոր դրից տէր, նոյն իսկ յաչս օտարազգեաց Հայ սեղանաւորութեան պատուաբեր, այսչափ վաղ կը գրաւի ու կ'երթայ խառնուիլ անէութեան մէջ։

Քանի՜ դէմք ունի դժբախտութիւնն, և քանի՜ այլազան կերպարանօք կը պատկերի մարդկան։ Նկարեցէք առաջի աչաց մի ընտանիք, այր եւ կին եւ երկու սիրասնուն զաւակունք, որք կը միացնէին զիրեար սիրոյ եւ գգուանաց քաղցր զոդիւ, մանաւանդ թէ կ'ամբողջացնէին զիրար առ ի կազմել առնին դրախտն երանաւէտ. ամոլք ծաղկատի, ծնելասէր գթով երջանիկ, որոց չէր ինչ պակաս առ ի վայելել հնարաւոր բարեբաստութիւնն ընդ արեգակամբ. անճաշակ աշխարհի դառնութեանց՝ կ'արբենային սիրով, կ'ըզմայլէին ընտանեկան քաղցրութեամբ եւ կ'որորուէին հեշտանօք ժպտուն բախտին թեւոց մէջ։ Լուսական մի պատկեր զոր ունիմ աչացս առջեւ՝ զայդ ամենայն որպէս թէ կը նկարէ ճշգրիտ։ Տէր եւ Տիկին Ներսէսեան նստած են շնորհալից դիմաց, ուրախ զուարթ, անգիտակ մօտալուտ սեւ ապագային որ կը հասնէր առ դուրս. հայր եւ մայր կը բաժնեն իւրեանց հոգւոյ հատորներն. Ներսէս գիրկն է առած իւր դեռափթիթ ուտրիկն. մօրն առընթեր կեցած է սիրունն Աննա, երկոքին քնքուշ եւ նազելի։ Երկու տարի յառաջ ո՞վ կը խորհէր՝ թէ այսքան կարճ ժամանակի մէջ պիտի կիսուէր այդ ընտանիքն, պիտի ժամանէր օրհասն դժբնդակ և չարաղէտ՝ խլել տանիլ նախ ուստրին իւր հոր գրկէն, եւ ապա գնայրն իւր ընտանեաց, իւր տիկնոջ եւ դըստեր, սրտէն. զմի մասն ընտանեաց թաղել ի հող եւ զմիւս մասն ի սուգ անհնարին. մահուան եւ ագոյ այս անբմբերելի ցաւոց մէջ մարել երանութեան արեւն որ կը ճառագայթէր Ներսէսեան որդւոյ նորակազմ ընտանեաց վրայ։ Այլ ևս այն լուսանկար պատկերն անցեալ մ'է, երջանիկ անցելոյ մը ստուերն մանաւանդ, որ կը պիտի միայն յաւելուլ ներկային դառնութիւնն. բարեբաստի՛կ այն օրեր, որոց յիշատակն առաւել եւս կ'արծարծէ վշտի հուրն, զոր ոչ երբեք կարեն շիջուցանել արտասուք։

Բայց վաղագրաւ Ներսէսեանի մահուան վրայ ոչ միայն կ'ողբան այրիացեալ տիկնին վշտաբեկ եւ որբացեալ դստրիկն Աննա, այլ եւ ծանրաթախիծ ծնողք եւ քոյրք, վշտալից ազգականք եւ ծանօթք առ հասարակ. իւր մահն կ'ազդէ դառն կսկիծ միակ որդւոյ եւ միակ եղբօր անդարձ անհետացման, բազմաթիւ գերդաստանք ի սուգ համակելք բաւական չեն արժանապէս լալ զէնքն Ներսէս, այնքան սիրելի ամենեցուն. Հայ երիտասարդութիւնն դառնապէս կ'ողբայ իւր մէկ ընտիր անդամին կորուստն, եւ ջերմապէս կը բաղձայ ազգային մեծ յիշատակարանի վրայ յաւերժացած տեսնել զներսէս։

Ց. ԳՈՒՐԳԻՆ

ՄԱՐԴԱԶՈՒՔ Ի ՏԱՀՈՄԷ

Ի՝Արեւմտեան Ափրիկէ Ֆրանսայի և Տահոմէի միջեւ ծագած դժուարութիւնք՝ ուշադրութիւն դարձուցած են այս վերջին հետաքրքրական երկրին վրայ։ Շատերուն ծանօթ է անշուշտ այս տարօրինակ երկիրն, որուն թագաւորը, արիւնռուշտ բռնաւոր, իրեն պահապան ունի երկու հազարէ աւելի ամազոններ, կին-զինուորներ, և որուն գլխաւոր հաճոյքն է հարիւրաւոր գերիներ գլխատել տալ իր ներկայութեանը, կա՛մ այդ մարդազոհերով պատուելով իր նախնեաց աճիւնը, և կամ տօնելով եւրոպացւոյ մը գայուստը մինչեւ իր մայրաքաղաքն Ապոմէ։

Աւելորդ է ըսել թէ այդ տեսակ ողջակէզներ, յաճախակի կրկնուելով, շուտ կը հատցնեն երկրի մը ժողովուրդը։ ուստի, Տահոմէի թագաւորներն իրենց հողին վրայ չէ որ կը հաւաքեն իրենց մարդկային զոհերը։ Ամազոններու խումբն յառաջ կը խաղայ, Տահոմէցի հազարաւոր մարտիկներու ի գլուխ, գիշերային կը յարձակի դրացի ցեղերուն վրայ, ոչնչացնելով հունձքերը, հրկիզելով տուները, դերի տանելով զանոնք որ չեն կրցած ճողոպրիլ այս ցնորական յարձակումենէն։

Ֆրանսական թեւարկութեան տակ գտնուող Բորդօ-Նովոյի գաւառն ալ ատենօք կը կրէր Տահոմէի հրոսախմբի բերուն արշաւանքը։ Վերջին արշաւանքին ատեն, որ 1889 մարտ ամսուն տեղի ունեցաւ, Տահոմէցիները ոչնչացուցին տասն և չորս գիւղ և գերի տարին 1,745 հոգի, որք ապա խողխողուեցան՝ այս հրէշային մարդազոհերուն սովորական արարողութեամբ։

Պ. Պայոլ, որ ֆրանսական կառավարութեան կողմէ Տահոմէ ղրկուած էր, ստիպուեցաւ ներկայ գտնուիլ այդ մարդազոհերուն մէկ մասին։ Այս ահռելի տեսարանին իր վրայ թողած տպաւորութիւնք գրաւորապէս յայտնի չեն, բայց այժմ հրատարակուած են Ֆիկ-օֆի մէջ տպաւորութիւնքն ֆրանսացի ուղեւորի մը որ երկու ամիս հարկադրեցաւ դիտել այդ խժդժութիւնները։

Այդ ֆրանսացւոյն, Պ. Ժ. Լարդիկի պատմած տեսարանները տեղի ունեցած են Կէկիկէ թագաւորին օրով, որուն մահը երեք ամիս առաջ ծանուցուեցաւ։ Օրն օրին տպաւորութիւններ են ադոնք, որոցմէ կը քաղենք կարեւորագոյն մասերը։

* * *

... 15 յունիս.—Կուգան իմաց տալ մեզ թէ պէտք է երթալ Ապոմէի ճամբուն վրայ կենալ, անդ սպասելու համար թագաւորին անցնելուն։

Ցիսունի չափ բանտարկեալներ զոհելէ յետոյ, թագաւորը դուրս ելած է իր Գանդոի պալատէն։ Իր մեկնումը կը ծանուցուի երկարատև հրացանաձգութեամբ։ Անմիջապէս կ'սկսի բոլոր պաշտօնատարաց թափորն, իւրաքանչիւրն իր աստիճանին համաձայն, ստորագասներն ի գլուխ։

Ճամբուն մէջտեղը փռուած են փսիաթներ և ամեն տեսակ կտաւներ։ Թագաւորն և իր կիները միայն կրրնան քալել այդ փսիաթին վրայէն։ Զօրքերը կ'անցնին երկու կողմերէն, ի ձայն տեղական երաժշտութեան եւ հրացաններու բոմբիւնի։

Երբ առաւարական Նախարար Մէհիւ երեւցաւ, ինձ նշան ըրին պատգարակին մէջ նստիլ և իր ձիուն հետեւիլ։ յայնժամ հանդիսատես եղայ ամենէն խօլական տեսարանին զոր մարդ կրնայ երեւակայել։

Բան հազար սեւամորթք հետիոտն, երեսունի չափ պատգարակներ իրարու ետեւէ սրարշաւ։ Այս բոլոր ժողովուրդ, հետեւելով Մէհիւի և ջանալով որ իրենց ետեւէն վազող թագաւորին մարդիկը չհասնին իրենց, դժոխային տեսարան մը կը կազմէր։ Այս հազարաւոր սեւամորթք քրտինք կը թափէին։

Ժամ 5ի կը հասնինք նախկին Ամատա թագաւորին պալատան առջեւ։ Թագաւորն ասա պիտի անցուներ գիշերը։ Հոն նստեցուցին զիս, դիտելու համար թափորին անցնիլը։ Քանի մը վայրկեան յետոյ, Ն. Վեհափառութիւն հասաւ իր պաշտօնատարաց և կանանց հետ։

Թափորին ետեւէն կուգային եւրոպական տարազով հագուած սեւամորթներ։ Ներման արժանացած բանտարկեալներ են ասոնք, ահաւասիկ ի՛նչ պարագայից մէջ։

Երբ ի պատիւ հանդուցեալ թագաւորին առաջին վայրագ արարողութիւնք կը կատարուէին, արդի Կէկէկէ թագաւորը, ձանձրանալով միշտ սեւամորթներ սպաննելէ, խորհուրդ յղացաւ ապիտակամորթներ նուիրել իր հօրը։ Ուստի չորս սեւ առաւ բանտարկեալներուն մէջէն, եւրոպական զգեստներ հագցուց անոնց, բազմաթիւ ծառայներ շնորհեց և պատգարակով քաղաքին մէջ պտտցնել տուաւ, ծանուցանելով իր ժողովրդեան թէ մէկ քանի եւրոպացիներ եկած էին իրեն և իր հօրը պիտի ղրկէր զանոնք։ Այս խեղկատակ կատակերգութիւնն աւարտելէ յետոյ, երկու սեւամորթները կախեցին պալատան առջեւ։ Միւս երկուքը ներման արժանացան, իրենց սերունդը մնանջինաւորելու համար, որպէս զի Ն. Վեհափառութիւն կարենայ ուզած ատեն յանպատրաստից սպիտակամորթներ ունենալ, երբ եւրոպացի մը կախելու տեսարանը վայելել ուզէ։

16 յունիս.— Թագաւորը աթոռակի մը նստած է, իր զօրքերէն և կիներէն շրջապատեալ։ Զայն ողջունելէ յետոյ կ'երթամ ծառի մը տակ նստիլ։

Թագաւորին մէկ նշանին վրայ, իր ներկայութեանը կը բերեն զօրեղապէս կաշկանդեալ կալանաւոր մը։ Դատական գործոց նախարար Մինկաւ կը ներկայացնէ զայն թագաւորին և կը հարցնէ թէ իր հօրը յանձնարարութիւն մը ունի՞։ Թագաւորը հաստատական պատասխան կուտայ, և Մինկաւ և ուրիշ բարձրաստիճան պաշտօնեայք թագաւորին հրամանները կը հաղորդեն առ կալանաւորն, որ գլուխը կը խոնարհեցնէ ի նշան հաւանութեան։ Հետաքրքրական բան էր տեսնել հաւաքն այդ մարդուն զոր քիչ յետոյ պիտի գլխատէին և որ համոզուած կը թուէր այն դերին զոր պիտի երթար կատարել հանդուցեալ թագաւորին մօտ։ Իր ճամբու ծախուց համար դահեկան մը և շիշ մը Բ-ֆէ- տուին իրեն, և ապա գլխատեցին։

Յետոյ, բերին չորս ուրիշ կալանաւորներ որք նոյն արարողութեամբ գլխատուեցան։ Յայտագրին այս առաջին մասը աւարտելէ յետոյ, թագաւորը ոտքի ելաւ աթոռակին վրայ, առաւ իր զէնքերն և պատերազմական երկար ատենաբանութիւն մը ըրաւ, զոր աւարտից՝ ինդրելով ժողովրդէն որ իր ետեւէն գայ միշտ։ Անհնար է նկարագրել այս վերջին խօսքերուն յառաջ բերած խանդավառութիւնը։ Ամէն կողմէ պատերազմական աղաղակներ կը բարձրանային։

Այդ երկար ճանապարհն որ արմատնենիներու անվախճան դաշտի մը մէջէն կ'անցնէր, այդ անհուն ամբոխին իր պատերազմական հետաքրքրաշարժ տարազներով, այդ աղաղակներն, այդ երգերն, վերջապէս այդ ամբողջ տեսարանը, լուսաւորեալ ճաճանչագեղ արեւով մը որ զէնքերը կը ցոլացնէր, վայրի մեծութեան այնպիսի հանգամանք մը ունէր զոր գրիչը չը կրնար թարգմանել։

—Պալատան առջի երկու ջրմբարներ կան, զոհերուն արիւնը ժողուելու համար։

23 յունիս.—Քսանհրեք պաշտօնեայներ և երաժիշտներ կ'ընտրուին զոհուելու համար, որպէս զի երթան ծառային հանդուցեալ թագաւորին։ Նիհար մարդիկ են և համբերութեամբ կ'սպասեն իրենց ճակատագրին։

28 յունիս.—Յարատեւ հրացանաձգութիւնք քաղաքի ամէն կողմը։ Տասն և չորս գերի կը զոհեն, որոց գլուխները այլ և այլ տեղուանք կը տանին, ի ձայն խօլոր զանգակի մը։

29 յունիս.—Հրապարակն ենք, ուր ամբոխը խռնուած է և կը պատրաստուի հանդուցեալ թագաւորին յիշատակին նուիրել սովորական զոհերը, անասունք և գերիք։

Գերիները ուսերու վրայ կը տարուին։ Բերաններն գալ գրուած է եւ չեն կրնար պոռալ։ Այդ տարաբաղդները չարաչար կը տառապին, դատելով իրենց դէմքին արտայայտութենէն, իրենց դուրս ինկած աչուններէն։

Վաղը, գիշերը, մեծ մարդազոհեր։ Այդ ամբողջ ժողովուրդը գիշեր ցերեկ անդ կը մնայ, հագիւ հազ պատրաստարեալ վրանի ձեւով յարդարուած քանի մը փսիաթներու տակ։ Երաժշտութիւնը միշտ կը թնդայ, երգերն և գլխատումնք չեն դադրիր։

Քառասուն հազար սեւամորթք հոն դիզուած են։ չկրնալով դուրս ելնել այդ շրջափակէն, անդ կը թափեն իրենց աղտեղութիւնները։ Ասոնց միացուցէք արեան և փտած դիակներու հոտը, և դեռ չէք կրնար գաղափար մը կազմել անդ տիրած նողկալի մթնոլորտին վրայ։

Վերջին երկու գիշերները, 500է աւելի գլուխ կտրեցին։ Զոհերուն արիւնովը կ'ոռոգեն հանդուցեալ թագաւորին գերեզմանը։

Զոհերուն մարմինները ոտքերէն կը քաշքշուին և քաղաքին փոսերուն մէջ կը նետուին, ուր ագռաւներուն, անգղերուն և գայլերուն կեր կ'ըլլան։

1, 2 և 3 օգոստոս.—Մարդազոհերը կը շարունակուին։ Մինչեւ հիմա զոհերուն թիւը 700ը կ'անցնի։

4 օգոստոս.—Հրապարակին վրայ կը բերեն տասնեւհինգ կալանաւոր կիներ, որ պիտի երթան միանալ հանդուցեալ թագաւորին։ մին պիտի տանի նորա ծխափողը, միւսը ծխախոտն, երրորդն ամառանոցն և այլն, վերջապէս այն բոլոր մանր մունր առարկայներն որոց հանդուցեալ թագաւորը պէտք կրնայ ունենալ ամէն վայրկեան։ Այս տարաբաղդները գիտեն իրենց դըլխուն գալիքը։ տխուր են և միշտ դէպի եռեւ կը նային, պարտադրին աչուրներով։ Ցօնի օրուան մը նման զարդարուած են և գայլ չունին բերանին։ Գիշերը պիտի սպաննեն զանոնք, դաւոյնի հարբեցած մը իկեցնելով իրենց կուրծքին։

5 օգոստոս.—Այսօր թագաւորը կը մատուցանէ իր զոհերը։ Ծառի մը վրայ կ'ելնենք դիտելու համար թափրն որ ժամու կէս կը տեւէ։ Զոհերը բազմաթիւ են։ ահագին քանակութեամբ անասուններ ալ կան, 79 ոչխար, 2 գայլ, 2 եղնիկ, 12 կով ելլն. յետոյ կուգան 15 կին և 35 այր։ Որքա կաշկանդուած են, ծունգերը կրծկուած դէպի ծնօտը, թեւերը սրունքներուն կապուած։

Թագաւորը կուգայ, շրջապատեալ իր կիներէն, որք միշտ հրացան կը պարպեն, մինչդեռ զօրքերը կը պարեն և սուր ապաղակներ կ'արձակեն։ Տեսարանը դժոխային է։

Իմ ետեւս, կը նշմարեմ չորս չքեղ սեւամորթներ որք մեծ խնամով կը հսկեն պղտիկ կառքի մը վրայ, որ— առ ի ձեւ—հանդուցեալ թագաւորին պիտի գրկուի։ Իրօք, այս ուղեւորութիւնը պիտի կատարեն յիշեալ չորս տարաբաղդ սեւերն, որք, որոշեալ նշանին, կը դիմեն դէպի կառափնատեղին։ Այդ տարաբաղդներն, որք գիտակ են իրենց վիճակին, տխրութեամբ կը յառաջանան անխօսուկ. արցունքի խոշոր կաթիլներ կը հոսին իրենց այտերէն վար։ Թագաւորն ինք իր ձեռքով կ'սպանէ զանոնք։

Թագաւորն ապա իր գահաւորակը կը բազմի վերստին։ Իր քովն են իր կիները, գատական նախարար Մինկաւ, Վիտահի կառավարիչն, և պիտութեան բոլոր աստիճանաւորք, որք, քիչ յետոյ, իրենք այ պիտի սպաննեն, թագաւորին պէս։

Երբ զոհուելիք բոլոր անասունները գահաւորակին առջեւ բերուեցան, կալանաւորներն երկու մասի բաժնուեցան. մէկ մասը մէկ կողմ տարուեցաւ, միւսը գահաւորակին առջեւ շարուեցաւ։ Թագաւորը, ծխափողը վառելով, զոհերուն նշանը տուաւ։

Անմիջապէս բոլոր դանակները մէկ անգամէն կ'իջնեն և հաւերու, ոչխարներու հարիւրաւոր գլուխներ մէկէն կ'իյնան. չուտով կ'առնուն գայնս և խեղճ կալանաւորներուն կը նետեն, որք ընդհուպ նոյն բաղդին պիտի արժանանան։

Կարգն ասոնց եկած է. ամէնը մէկէն կը խողխողեն. կէս ժամու չափ, ահռելի տեսարան մին է այս։

Դանակի երեք չորս հարուած կ'իջեցնէին, մինչեւ որ գլուխը մարմնէն բաժնուէր։ շատ անգամ չէին կրնար. յայնժամ կը կտրէին գլուխը մարմնոյն կապող միսերը։ Յետոյ այդ բոլոր գըլխները հրապարակին վրայ կը նետուին։

Արիւնը ամէն կողմ կը հոսի, դահիճներն արեամբ ծածկուած էին, ինչպէս նաև գահաւորակին ստորոտը գանուող կալանաւորներն, որք գիշերը գլխատուեցան նոյն արարողութեամբ։

6-7 օգոստոս.— Զորս նոր կալանաւորք գլխատուեցան հրապարակին վրայ։ Երեկոյին, Վիտահի կառավարիչն իրեն և իր ընտանիքին անուն կը նուիրէ իր զոհերը, այսինքն անթիւ հաւեր, 29 ոչխար, 12 կով և 13 կալանաւոր։

8 օգոստոս.—Նախորդ թագաւորին բոլոր գաւակներն ևս 29 կալանաւոր կը զոհեն։ Այսօր ժամանակ չմնալով ամէնը միանգամ խողխողելու, մէկ մասը վաղուան կը թողուի։

9 օգոստոս.— Կը շարունակեն գլխատել երեկուընէ մնացած եւ այս աւուր կալանաւորները։

10 օգոստոս.— Վիտահի կառավարչին բոլոր ընտանիքը զոհեր կը մատուցանէ, 10 կով, 31 ոչխար և 13 կալանաւոր։

11 օգոստոս.— Թագաւորին մայրն եւս կովիր եւ երկու կալանաւոր կը զոհէ։ Նոյնպէս եւ հանդուցեալ Նոպլէ թագաւորին տան պահապանը. ինքն այ քանի մը անասուն և կալանաւոր մ' կը խողխողէ։

12 և 13 օգոստոս.— Իւղի բոլոր վաճառականները մատուցին իրենց զոհերն, որոց մէջ կային քսաներեք կալանաւոր։

14 Օգոստոս.—Նախատօնակ այն աւուր յորում բոլոր ժողովուրդը պարտի գլուխն ծռիլել։ Բոլոր օրն և բոլոր գիշերը, ամբոխը դիւային աղմուկ մը կը յարուցանէ պալատան հրապարակին վրայ, ուր անդադար կալանաւորներ կ'սպաննեն։ Ա՛լ պէտք ունինք որ այս արարողութիւնք աւարտին. չենք կրնար դիմանալ, ուժասպառ եղած ենք։

15 Օգոստոս.—Բոլոր բնակիչք գլուխնին կ'ծռիլեն։ Առաջին պաշտօնեայն կուգայ ամենէն առաջ իր ծռիլեալ գլուխը ցոյց տալ թագաւորին, ամբոխն ալ իրեն կը հետեւի։

Ամբողջ օրը անդուլ հրացանաձգութիւն կ'ընեն։ Պ-ղոն-գէ- կը բանան թագաւորին փոսը, հոն ողջ ողջ թաղելու համար իր նախկին սպասաւորներուն մէկ մասը։ Նմանապէս այդ փոսին մէջ կը նետեն առատուն կտրուած յիսունի չափ գլուխներ։ այդ զոհերուն արիւնը սահմանեալ է ոռոգելու հանդուցեալ թագաւորին գերեզմանը։

Այս արարողութիւնք դեռ տիս մնն ալ պիտի տեւեն, և այդ ամսուն ամէն օր զոհեր պիտի մատուցուին։ Յետոյ թագաւորն իր բոլոր ժողովրդեան հետ պատերազմի պիտի երթայ, որպէս զի կալանաւորներ հայթայթէ և հոկտեմբերին վերսկսին նոյն արարողութիւնները, որոց միջոցին եօթն ամիս հարիւր կալանաւորք պիտի գըլխատուին։

Տպարան Գ. Ամերիկեան

Պատիւ ունիմ ծանուցանել մեր բազմաթիւ յաճախորդաց եւ ազգայ հասարակութեան թէ կատարեալ Հայատառ մը տպարան մը ինչուրեան Հայատառ վերջերս տպագրութեան եւ թէ վիմագրութեան, ճոխ սանձ ներ ունէ տպագրական տառերով եւ սանձ եմ, եւ գրծեալ մեքենաներով, զարդ նոր բերել տուած եմ, եւ որոյէ կարող եմ պատրաստել գործ՝ լաւագոյն սանձ գործանութեանց համար։

Դիմել առ Գ. Պողոսեան
Կ. Պոլիս

Սուլթան-հասան փողոց թիւ 14

ԲԱՌ
Rákoczy
ԵԱՆՈՍ

Իբր ապահով առողջարար ԼՈՒԾՈՒԼԱԿԱՆ մէջոց, յանձնարարեալ նշանաւոր բժշկներու կողմէ որովայնի հիւանդութեանց, արեան կարծրացման (engorgement) և ուռիներթական, լերդի երիկամանց և խուլային հիւանդութեանց համար, նաեւ ջերմի, յոգնայաւութեան, մարթի բորբոքման, պնդութեան եւն.

Կը ծախուի ամեն դեղարաններու և դեղավաճառաց քով։ 358 2—12

Հարցէ՝ ԵՂԲԱՐՔ ԼՕԶՐ Ի ՊՈՒՏԱՌԵՆՊ

ՏՕՔԹՕՐ Ս. ԱՐԱՊԵԱՆ

Վ.կայեալ Բարիզու Բժշկական Համալսարանէն

Կը դարմանէ ներքին և արտաքին ամեն տեսակ հիւանդութիւններ։

Մասնաւոր խորհրդակցութիւնք սրտի և կուրծքի հիւանդութեանց համար։

Կը գտնուի կամուրջի դէմ Քիւչիւքեան Եղբարց դեղարանն երկուշաբթի եւ չարաթ օրերը և Սամաթիա Աթաթիւրքի մօտ Մովսէսեանց տունը։ 351 6—20

ՏՕՔԹՕՐ Գ. ԳԱՄՊԱՐԵԱՆ

Ակուսարէն փոխադրուած է ի Բերա Պէքեար փողոց թիւ 9։

Երեքշաբթի, հինգշաբթի և չարաթ օրերը կէս օրէն վերջ իւր բնակարանը կ'ընդունի հիւանդներն և երեքշաբթի օրեր ձրիաբար կը դարմանէ աղքատները։ 47

ՏՕՔԹ. Ա. ՔՕՍԱՆՍ ԵՐ ԲԱՅԹԷՐ

Բժիշկ, վիրաբոյժ և մանկաբարձ, վ.կայեալ Ամերիկայի համալսարանէն, հաստատուած է ի Բերա, Եէնի-Զարչի փողոց, թիւ 80։ Հիւանդները կ'ընդունի միջօրէի ժամ 1 էն 2, ըստ Եւրոպացւոց։ Երեքշաբթի և ուրբաթ օրերը ձրիաբար կը դարմանէ հիւանդները։ 54

ԼԱ ՆԻՒԵՈՐՔ

ԿԵՆՏՐՈՆ ԱԶԳԱՀՈՎԴԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԿ.

Ընկերութեան գրասենեակները փոխադրուած են ի Մաքրի խան, թիւ 2, Վոյվոտա, Ղալաթիա (Լորանտօ խանին քով)։

Ամեն տեղեկութեանց համար դիմել առ գործակալ Պ. Ժ. Ժ. Գասդէլի 235 11—12

ՍԳՈՂԻ ՄՕՏԻՒ ՁԿԱՆ ՕՇԱՐԱԿ

Եբլաքզ. Կ. Պոլիս, 13 Փէտէ. 1966

Պարոնայք Սգոյ և Պուսն,

Կը ցաւիմ որ պաշտօնական գիրքով [կարող չէմ փորձն ընել, այլ համեստ ուրիշներու փորձերուն և այն բժշկաց որոց պաշտօն յանձնեցի փորձել զայն մեր հիւանդանոցաց մէջ, կը յայտարարեմ որ ձեր Մօրս ձկան իւղն, իր այդ վիճակին մէջ գիւրաւ խմուելով և մարսուելով, կը համապատասխանէ այն յատկութեանց զոր պատարաժական գիտութիւնն ի վերուց անտի հաստատած է, մասնաւորապէս այս յաղթ պատարաստութեան մէջ։

Տ. Ս. Ս. ՄԱՎՐՈՅԵՆԻ ՓԱՇԱ
Բժիշկ Վ.Հ. Սալթանին

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՖԷՐԻ

Միւպայեա օլունճաղը էվվելճէ իլան գէրլենան սալիմ էլ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

1

ՆՕՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԵՒ ՄԷՐՔԸՆԹԱՑԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 6,515,542
ՀԱՍՈՅԹ 1888 ՏԱՐԻՈՅ 2,085,347

ՆՕՐԹՀՐԸՆ ԷՇՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,581,000
ՀԱՍՈՅԹ 1888 ՏԱՐԻՈՅ 967,900

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած դրամական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար վիրենք ներկայացնել. նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչեւ ցարդ տուժած վնասներին 17,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԹԱՑՄ

ԴՐԱՄԱԳԼԻՈՒԽ Անգլ. Ոսկի, 500,000 — ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գօմիսիոն խանի անկիւնն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ ԳԱՌՆԻԿ Ց. ՍԵՐՈԲԵԱՆ Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց

PARIS

GRANDS MAGASINS DU

Printemps

NOUVEAUTÉS

Envoi gratis et franco

du catalogue général illustré renfermant toutes les modes nouvelles pour la SAISON d'Été, sur demande affranchie adressée à

MM. JULES JALUZOT & Cie
PARIS

Sont également envoyés franco les échantillons de tous les tissus composant nos immenses assortiments, mais bien spécifier les genres et prix.

Expéditions dans tous les Pays du Monde.

Le catalogue indique les conditions pour l'envoi *franco de port*

Correspondance en toutes Langues

ԴԵՂ. ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Տոքթոր Ալէրի ջերմային հիւանդութեան, այս դեղն՝ որ անիսաւն բաղադրութիւն մի է զուտ բուսեղինաց, է դառնահամ և ապգու կաղդուրիչ ամեն տեսակ ֆիզիկական խանդարմանց, որ յառաջ կուգան ճախճախուտ վայրերու ջերմտաք կլիմայից վատ ու ապականեալ օդերէն, որուն օգտակարութիւնը և ապաքինիչ ատոյգ յատկութիւնը երաշխաւորեալ է Նորա անհամար արդեանցը սատյգ գիտութեամբն։ Այս ֆիզիկական խանդարութիւններն յառաջ կուգան օդին մէջ լողացող թունաւոր անչափելի նիւթոց միջոցաւ, որք թոքերէն անցնելով կը մտնեն արեան մէջ, կը խանգարեն լեարդը, և յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և տենդեր, և արեան թունաւորումն, որոց աս անուններն տրուած է. ջերմն և սարսուռ, թագուն ջերմ. պարբերական ջերմն, ընդհատեալ ջերմն մաղձային տենդ և հրատապ տենդեր։

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մինչորոյր ապականեալ և թունաւորեալ է ճահիճներէ կամ ճախճախուտ վայրերէ բուրեալ ժահահոտ նիւթերով, կամ բաց ապրանոցներէ և ականներու ծակտիկներէն ելած թունաւոր կազերով, զորս մարդիկ կը ծծեն շնչառութեամբ։

Ալէրի ջերմի ու տենդից դեղն կը ջնջէ այդ թունաւոր նիւթոց կամ կազերու ազդեցութիւնը և դուրս կը վանէ զայն մարմնոյն մէջէն, որոյ գործածութիւնն ստուգապէս անվտանգ և անվնաս է և օգուտ ատոյգ, միայն թէ տրուած հրահանգից համեմատ գործածուի։ Կը ծախուի Միացեալ Նահանգաց և ընկերաց Ամերիկեան վաճառատան բէջ ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ։ 181

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Ուղ. Ամերիկա Լիվերպուլ և Ամերիկա Գլասգով

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ումբրիա	7718	Գալատիա	4841
Եդրուրիա	7718	Պոմերիա	4535
Սերվիա	7391	Սամարիա	2574
Ուրանիա	7268	Մարաթան	2109
Բաղտիկա	5587	Ագլան	2398
Սկիթիան	5517	Սարակոսա	2160
Կալիա	4809	Թարիֆա	2246
Սիթիա	4557	Բալտիրա	2143
Ակերբո	2143	Թրինիտատ	1899
Քեսար	1876	Մորգագ	1858
Շերղուրկ	1614		

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՈԼԻ գործակատար
Thomas C. Joly
Թիւ 1, Քիւշիւք Հալիլ փաշա խան
196 Ղալաթիա

ՄԱԴԻՈՆ

ԿԻՍԱԻԻՊԼԸՐ

ՀԻՆԳԵՒՑԻՆ ԲՆԱԿԱՆ ՋՈՒՐ

Կալաքարային թթուաւետ աղբիւր ամենամաքուր

ՍԵՂԱՆԻ ԼԱՒԱԳՈՅՆ ԵՒ ՋՈՎԱՐԱՐ ՀՄՈՒԵԼԻ

Հազերու, խաչափոցի բորբոքմանց, ստամոքսի և ազեաց համար յանձնարարեալ։

Հայնրիխ Մադդոնի, Գարլսպատ և Վիեննա 47

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈՒՇԿԵՆԱՒԻՔ

Երիթ-էկ-Աֆէյ, Կ. Պոլսոյ և Օրէսայի դիմաց

ԹՈՒՄԱՍ ՄԻՒԼՍԸՆ ՈՐԴԻՔ ՀԸՆԿ

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Եվրոպա	2000	Թրամինկո	1600	Մալերմա	1200
Անգէլս	3000	Վալիկէս	5500	Անտեր	1700
Ամոլլս	3500	Վիդանս	2200	Իվան	1500
Սրիկ	1500	Սոզոս	1100	Իոլս	1000
Արիսոգ	4000	Կրանս	2500	Բուիդս	2800
Պասանս	1000	Հրոս	1000	Խալիթ	4400
Պորտուգալ	220	Լիտալիս	3000	Ինալգ	3200
Կրաֆ	2000	Հինտու	7000	Օլս	3000
Պլիմութ	8500	Սամիր	1200	Ռոմէս	800
Դելլրս	2600	Լամպս	1000	Օգարիս	3500
Գայրոս	2400	Ֆիլնս	2800	Սալէրնս	4000
Գանէս	2100	Դելլս	2000	Անդիանս	8200
Գրաֆ	2000	Գոլբրնս	4200	Ամֆիս	2000
Գոսս	2000	Գոլնս	2200	Ս. Լիվիս	2000
Զիքանս	1000	Լէս	1000	Սորէնտս	3300
Տլիս	4000	Հրանթս	4500	Թ. Հարլսն	3000
Դալբրատս	8400	Իվանս	3000	Թուրս	1100
Տիդս	2600	Ալմն	1000	Թուլիտս	2300
Տոմնս	1800	Աբրնկս	3800	Թորբիտս	800
Տուրս	4100	Գարդիլլս	6500	Ս. Բարնս	5000
Տրարս	2400	Ինիս	1000	Գոլթուրս	5000
Տարնամ	1000	Մորինս	3100	Լիտս	3600
Էլտարատս	3000	Ելս	2000	Հէդրա	1000
Էլէքթրս	3200	Արլանտս	3000	Տիֆանդնս	200
Էրմիս	2600	Թէլլս	5000	Ամմոս	200
Ֆուլքան	800	Գրանս	4000	Ալերս	140
Ֆիս	1700	Սգդս	2000	Սոքիթս	120
Լիթիրլզ Մոնարք					8000
Բերմիրզն Մոնարք					8000
Լիդրզ Մոնարք					8100

Ուղեւորներս համարձակ դիմեցեն Կ'ընտրեն

Կրնան շոգենաւը, Նաւապետ Ուտ, ընդհանուր վաճառքով Հրլէն աստ կ'ըսպասուի ամսոյս 5ին շաբաթ օր։

Տրուած շոգենաւը այժմ կը բեռնաւորի ի Հրլ ընդհանուր վաճառքով, ուղղակի Կ. Պոլսոյ համար։

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՈՒԻՇ
Գրասենեակ
Թիւ 17-18, Քիւշիւք Միւլէթ
156 խան, Ղալաթիա

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՍԻԼԵԱՆ

Ն. ԲԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսէլիոյ և Բոլիս դէպ. կանոնաւոր

Սամսոն, Տրապիզոն և Պաֆում երթալիք յառաջիկայ շոգենաւն է Արմենէ որ ապրիլ 2ին Մարսիլիայէն և ապրիլ 9ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Մինէրվա որ պիտի մեկնի տպրիլ 15ին։

Բարիզ Լիոն Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնելով,

Ա. կարգ 300 ֆրանք
Բ. » 220 »

Ուղեւորք և բեռք ուղղուին

Նաւաղէրք, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՄՈԹԷ ԲԷՀՈՒԼ
Թիւ 17-18 Քիւշիւք Միւլէթ
371 Մաշհանէ փողոց, Թիւ 14

ՈՍԿԵԱՑ ԵՒ ԱՐԾԱԹԵԱՑ ՎԵՑ ՄԻՏԱԼՔ — ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄՆ ՍՏԱՄՈՔՍԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵՆՆ — ՊԱՏՈՒՈՅՑ ՎԿԱՅԱԿԱՆ 1872 ՓՈՐԻՋ

ՏԻՒՌԱՆԻ ԳԻՆԻ

88

Ֆրանսացի և օտար բժշկաց 4,000է աւելի ներքրոպոլիոյ վկայութիւնք կ'ապացուցանեն ազդեցութիւնն այս գինիին, որ Ալիքանթէի գինիին շատ ախորժահամ է։

Կազդուրիչ և զբաղցուցիչ ուրախութիւն կ'ուրախացնէ ուժասիւնը և կը դարձնէ հրաշալի։

Կեդրոնատեղի՝ ԾԱՆՆԻ ԵՒ ԺՈՒՏԱՆ, 1, կամուրջի հրապարակ, Պոլիս

ԼԱ ՌՈՒԱՆԷԶ

LA ROUENNAISE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՀԻՄՆԵԱԼ Ի 1837

Կեդրոնատեղի՝ 18, Սէն-Մառք փողոց, Բարիզ

Դրամագլուխ, 4,000,000, Վճարեալ ընդհանուր իբր 30,000,000

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել ի գրասենեակս ընդհանուր գործակալութեան, Ղալաթիա, Մահմուտիէ փողոց, Թիւ 2, Հէրէմեան խան, Գամոնտոյի Պանգային դիմաց։

166 Ընդհանուր գործակալք բովանդակ Թուրքիոյ և Յունաստանի
ՍԻՄՈՆ ՓԱՇՄԷՐԼԵԱՆ և ԸՆԿ.

PAPIER WLINSI

Վլէնսի թուղթին ահագին յաջողութեան պատճառն այն է թէ մարմնոյն բորբոքումները դուրս քաշելու յատկութիւնն ունի։ Առաջնակարգ բժիշկներ կը յանձնարարեն զայն ընդդէմ կուրծքի տկարութեանց։ Հարբուխ, Պրոնշիդ, Կոկորդի ցաւ, Յոգնացաւ։ Իւր գործածութիւն չատ պարզ և դիւրին է։ Կը բաւէ միայն անգամ մը մարմնոյն վրայ դնել։

J. Wislin & Cº. 31, Rue de Seine Paris

Կը գտնուի ամէն դեղատանց մէջ։
Պահանջել Վլէնսի անունը։

Ատենադպիր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՉՈՒԱԳՐՈՒԹԻՒՆ. ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՒ

ԼԷՍՊԷՐԱՆՍ — L'ESPERANCE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Արտօնեալ Դրամագլուխ	ֆր.	10,000,000
Սահմանադրեալ	»	1,000,000
Վճարեալ	»	864,000

Ընկերութիւնս կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի ամէն տեսակ կալուածներ, կարասիք, մթերանոցներու և վաճառատանց մէջ գտնուած ապրանքներ՝ խիստ դիւրամատչելի գներով և ամենաշահաւոր պայմաններով։

Ընկերութիւնս մեծագումար դրամներ կարենալ ապահովագրելու համար միացած է Եւրոպեան չորս կարեւոր ընկերութեանց հետ՝ որոց Դրամագլուխը կը հասնի առաւել քան 16,000,000 ֆրանքի։

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել ի գրասենեակս Ընդհանուր Գործակալութեան, ի Պոլիս, Պահչէ Գաբու, Ճէլալ պէյ խանի ճիշտ դէմ թիւ 21-22։ Ընդհանուր գործակալք բովանդակ Թուրքիոյ
320 ՍԱՀԱԿ ԳԱՏԻՃ և ԸՆԿ.



ROYAL VICTORIA

ՄԱԶԵՐՈՒ ՎԻԿՏՈՐԻԱ

ԱՆՎԻՐԻՊԵԼԻ ԴԱՐՄԱՆ

ՄԱԶԵՐՈՒՆ, ՄՕՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԵՏԻՒՆ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ՈՅԺՆ ԵՒ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ

Գործածութիւնը դիւրին. կ'արդիւնէ մաղերուն թափիլը. չեմբզկեսէ բայց ապահով արդիւնք յառաջ կը բերէ. բնական և փայլուն գոյն կուտայ մաղերուն։ Գործածութիւնը բազմաթիւ է.

ՆԵՐԿ ԶԻ ԶԻ ԱՅՍ

Փափաքեալ արդիւնքն ընդհանրապէս յառաջ կուգայ 10—15 օր յետոյ

Այն անձինք որք ծանր հիւանդութիւններէ ելած են, անոնք որ մաստանջութիւններ ունին, կանայք որ կամ տուած են և մեծ յոգնութեանց ենթակայ բոլոր մարդիկ իրենց մաղերը կորսնցնելու ենթակայ են. այս պարագայից մէջ մասնաւոր ՄԱԶԵՐՈՒ ԱՐԳԱՑԱԿԱՆ ՎԻԿՏՈՐԻԱ ՎԵՐԱՆՈՐԴԻԶԸ կոչուած է,

ՄԵԾ ԴԱՌՆԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԱՏՍՈՅԱՆԵԼՈՒ

Ի Թուրքիա մեծաքանակ վաճառման համար միակ կեդրոնատեղին է ԷՏՄՈՒՆԴ ԳԱՏ Ա.ՆԱ. Մթերանոց անգլիական, Վիվասա թիւ 95 և 97, Ղալաթիա։ 68

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՑՐԻՑԻՒ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ 1686

1890 ՄԱՐՏ 1 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ ՄԻՆՉԵՒ ՅՆՈՐԻՆՈՒԹԻՒՆ

Վոսքրեն Էլնոզ ըրթենառներ

1 — Վանիք. Զենկել. Պեյլեր. Գուզկ. Պեշիք.
1 — Արնավ. Գուրուշ. Օրթաք. Պեշիք.
1 — Եենիմ. Մեզ. Պեյլիւք. Թար. Սենիք. Միրկ. Ր. Հիսար Պեշիք Արնվ. Գուրուշ. Օրթ. Պեշիքթաշ
1 — Պեյդզ. Բաշտ. Զուպդ. Գանլ. Ա. Հիսար Գանա. Վանիք. Զենկ. Պեյլ. Գուզկ.
2 — Ր Ա. Գավագ Մեզարդ. Պեյլիւքտ. Թարդ. Պեյդզդ. Բաշտ. Զուպ. Գանլ. Ա. Հիսար Գանա. Վանիք. Զենկ. Պեյլ. Գուզկ. Պեշիքթաշ
2 30 Եենիմ. Մեզարդ. Պեյլիւքտեբե Թարդ. Սենիք. Միրկ. Պոյաճ. Ր. Հիսար Պեշիք Արնավ. Գուրուշ. Օրթա. Պեշիք
3 50 Մեզդ. Պեյլիւքտ. Թարդ. Պեյդզդ Բաշտ. Զուպ. Գանլըճ. Ա. Հիսար Գանա. Վանիք. Զենկ. Պեյ. Գուզ. Իսակ.
5 — Պեյդզդ Բաշտ. Զուպ. Գանլը Ա. Հիսար Գանա. Վանիք. Զենկել. Պեյլ. Գուզկ. Պեշիք.
4 30 Եենիմ. Մեզդ. Պեյլիւք. Թարդ. Սենիք. Միրկ. Պոյաճ. Ր. Հիսար Պեշիք Արնվ. Գուրուշ. Օրթ. Պեշիքթաշ
5 45 Եենիմ. Մեզդ. Պեյլիւքտ. Թարդ. Սենիք. Միրկ. Պոյճ. Ր. Հիսար Պեշիք Արնվ. Գուրուշ. Օրթ. Պեշիք.
7 — Եենիմ Մեզարդ. Պեյլիւք. Թարդ. Պեյդ. Բաշտ. Սենիք. Միրկ. Գանլըճ. Ր. Ա. Հիսար Գանտիլ. Արնավ. Զենկել. Պեյլ. Օրթաք. Գուզկ. Պեշիք. Իսակ.
8 15 Ա. Ր. Գավ. Մեզդ Պեշիք. Թարդ. Սենիք. Պիթեն. Մրիկեան Ր. Հիսար Պեշիք. Արնվ. Գուրուշ. Օրթաք. Պեշիկ.
9 — Մեզդ. Պեշիք. Թարդ Պեյդզդ. Բաշտ. Զուպ. Գանլ. Ա. Հիսար Գանա. Վանիք. Զենկ. Պեյլ. Գուզկ. Իսակ.
10 — Մեզդ. Պեշ. Թարդ. Սենիք. Միրկ. Ր. Հիսար Արնվ. Օրթ. Պեշիք.

Կոմաքրլէն դէնոզ ըրթենառներ

2 30 Պեշիք. Օրթ. Գուրբ. Արնվ. Պեպէք Ր. Հիսար Միրկ. Սենիք. Թարդ. Պեշ. Մեզդ. Սենիմ.
3 — Գասպաթ. Իսակ. Պեշիք. Գուզկ. Օրթ. Պեյլ. Զենկելք. Արնավ. Գանա. Ա. և Ր. Հիսար Գանլըճ. Մրիկ. Սենիք. Բաշտ. Պեյդ. Թարդ. Պեշիք. Մեզարդ. Սենիմ.
3 15 Իսակ. Գուզկ. Պեյլ. Զենկ. Վանիք. Գանա. Ա. Հիսար Գանլ. Զուպ. Բաշտ. Պեյդզդ
4 — Պեշիք. Օրթ. Գուրբ. Արնվ. Պեպէք Ր. Հիսար Պոյճ. Պիթեն. Սենիք. Թարդ. Պեշիք. Մեզդ. Սենիմ.
5 15 Պեշիք. Օրթ. Գուրբ. Արնվ. Պեպէք Ր. Հիսար Միրկ. Սենիք. Թարդ. Պեշիք. Մեզդ. Սենիմ. Ր. Ա. Կավագ
6 15 Գասպաթ. Իսակ. Պեշիք. Գուզկ. Օրթաք. Արնավ Ր. Հիսար Միրկ. Սենիք. Պեյդզդ. Թարդ. Պեյ. Մեզարդ. Սենիմ.
7 15 Պեշիք. Իսակ. Գուզկնանմ Օրթաք. Պեյլեր. Զենկելք. Արնավ. Գանա. Ա. և Ր. Հիսար Միրկ. Սենիք. Թարդ. Պեսիլիւք. Մեզդ. Սենիմ.
8 30 Պեշիքթաշ Օրթ. Արնվուտ. Պեպէք Ր. Հիսար Մրրկ. Սենիք. Թարդ. Մեզդ. Պեյդ.
10 5 Գասպ. Գուզկ. Պեյլեր. Զենկ. Վանա. Գանա. Ա. Հիսար Գանլըճ. Զուպդեզլը Բաշտ. Պեյդ. Թար. Մեզ. Ր. և Ա. Գավագ.
10 15 Պեշիք. Օրթաք. Գուրբ. Արնավ. Պեպէք Ր. Հիսար Միրկ. Սենիք. Թարդ. Պեյդ. Մեզարդ. Սենիմ.
11 — Պեշիք. Օրթաք. Գուրբ. Արնավ. Պեպէք Ր. Հիսար Մրրկեան Սենիք. Թարդ. Պեշիք. Մեզարդ. Սենիմ.
11 10 Իսակ Գուզկ. Պեյլեր. Զենկ. Վանիք. Գանա. Ա Հիսար Գանլըճ. Զուպ. Բաշտ. Պեյդ.
11 30 Պեշիք. Գուզկ. Օրթ. Պեյլեր. Զենկ. Վանիք.
12 — Պեշիք. Օրթ. Գուրբ. Արնվ. Պեպէք

EMULSION SCOTT

(ՍԿՈՏԻ ՕՐԹԸՐԸԿ)

ՄՈՐԻՒ ՁԿԸՆ ՅՈՒՏ ԻԻԴ.

Իրաքանչիւր ոք լսել և տպրայով

Պատրաստեալ ձեռամբ ՍԿՈՏԻ և ՊՕՈՒՆԻ, ի Նիւ-Եորք։

Կաթին չափ ախորժահամ է

Մարիւ ձկան հոտ իւղի բոլոր յատկութիւններէն զատ, իբրոֆոսֆիդներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճոզածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, ամենէն փոփոխ ստամոքսները կը տանին զայն.

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս. ՀԱՄՄԻՐ ԵՒ ՀԻՐՋԻԼ 81